# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, Երևան 0095, Մ. Բաղրամյան պող. 19, հեռ.՝ 011513351, zaruhi.batoyan@parliament.am

13.12.2023

**ՀՀ ԱԺ նախագահ**

**պարոն Ալեն Սիմոնյանին**

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների պահանջները՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացնում ենք «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Հաշտարարության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը:

Ազգային ժողովի Աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են.

ա) նախագծերը (հիմնական զեկուցող՝ Զարուհի Բաթոյան),

բ) նախագծերի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքների փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով օրենքի նախագիծը դնել շրջանառության մեջ:

**Հարգանքով՝**

**Զարուհի Բաթոյան**

**Սոնա Ղազարյան**

**Ծովինար Վարդանյան**

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# «ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 2017 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-320-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ»:

***Հոդված 2.*** Օրենքի նախաբանում, 2-րդ, 3-րդ, 4-րդ գլուխների վերնագրերում, 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, 3-9-րդ հոդվածներում և 11-21-րդ հոդվածներում, 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «ընտանիքում» բառից հետո լրացնել «և կենցաղային» բառերը:

**Հոդված 3.** 7-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերում, 8-րդ հոդվածի 3-րդ մասում, 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-3-րդ, 5-րդ և 7-րդ կետերում, 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 20-րդ հոդվածի 5-րդ մասում, 22-րդ հոդվածի 2-րդ մասում «եղող» բառը փոխարինել «գտնվող» բառով:

***Հոդված 4.*** Օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կանոնակարգում է ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության կազմակերպաիրավական հիմքերը, սահմանում է ընտանիքում և կենցաղային բռնության հասկացությունը, ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրավասու մարմինների լիազորությունները, պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկությունների իրավական պաշտպանության առանձնահատկությունները:»:

***Հոդված 5.*** Օրենքի 3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Ընտանիքում և կենցաղային բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնի արարքը, անտեսումը կամ հետամտումը, որոնք կատարվել են ընտանիքի անդամների կամ զուգընկերների կամ նախկին զուգընկերների միջև:»:
2) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) **ֆիզիկական բռնություն՝** անձի կամքին հակառակ ֆիզիկական բնույթի բռնի արարքը՝ ներառյալ բժշկական, այդ թվում հոգեբուժական բնույթի միջամտությունների ենթարկվելուն պարտադրելը, բժշկական օգնություն ստանալուց զրկելը կամ նման օգնությանը խոչընդոտելը, ֆիզիկական ցավ պատճառելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սպանությունը, առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, ֆիզիկական ներգործությունը, ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը.»:
3) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ «2) **սեռական բռնություն՝** անձի կամքին հակառակ սեքսուալ բնույթի գործողություններ, այդ թվում՝ անձի սեռական օրգաններին և մարմնի մասերին անցանկալի հպումները, անձին երրորդ անձի հետ սեռական

բնույթի գործողություններում ներգրավելը, կուսության ստուգումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները.»։

4) 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**3) հոգեբանական բռնություն՝** անձին հոգեբանական ճնշում, հոգեկան տառապանք պատճառելը, ներառյալ՝ անձի ինքնագնահատականի և արժանապատվության նվաստացումը, սեփական երեխաների, ընկերների և հարազատների հետ շփումներն արգելելը կամ դրանց խոչընդոտելը, ինչպես նաև վերահսկողություն կիրառելը, ինքնավնասման կամ ինքնասպանության սպառնալիքով ճնշում գործադրելը, տնտեսական բռնություն գործադրելու, տնային կենդանիներին վնասելու սպառնալիքը, դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ հարազատի կամ զուգընկերոջ կամ ընկերոջ կամ խնամքի տակ գտնվողի անվտանգության համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ հոգեկան ներգործությունը կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինքնասպանությանը հասցնելը կամ հակելը, հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը.»։

5) 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**4) տնտեսական բռնություն՝** անձին հարկադրված նյութական կախվածության մեջ դնելը, նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք, հիգիենիկ պարագաներ, օրենքով սահմանված նպաստ կամ կենսաթոշակ, այդ թվում՝ երեխայի համար տրամադրվող, աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ) զրկելը, անձին սեփականության իրավունքով պատկանող կամ նրա կողմից տնօրինվող գույքը վնասելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով

պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կամքին հակառակ նրան վարկային կամ ֆինանսական գործարքներում ներգրավելը, անձին սեփականության իրավունքով պատկանող միջոցները և գույքը կտակելուն կամ նվիրաբերելուն հարկադրելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը.»,

6) 2-րդ մասի 5-րդ կետում «օրինական» բառերից առաջ լրացնել «այլ» բառը.

7) 2-րդ մասը լրացնել նոր՝ 6-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ «6) հետամտում՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ անձին հետամտելը.»:

***Հոդված 6.*** Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) **ընտանիքի անդամներ**՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները, տատ, պապ, քույր և եղբայր (նաև համամայր կամ համահայր), ամուսնու քույր, ամուսնու եղբայր, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը.»:
2. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ «2) **աջակցության կենտրոն՝** ընտանիքում և կենցաղային բռնության կամ ենթադրաբար ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց, իսկ անհրաժեշտության դեպքում այդ անձանց ընտանիքների անդամներին սոցիալական աջակցություն տրամադրող կազմակերպություն՝ հավաստագրված Լիազոր մարմնի կողմից.».
3. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ «3) **ապաստարան (ընտանիքում** և կենցաղային **բռնության ենթարկված անձի հոգածության կենտրոն)**՝ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող

անձանց՝ սույն օրենքով սահմանված դեպքերում տրամադրվող անվտանգ ժամանակավոր կացարան, հավատարմագրված Լիազոր մարմնի կողմից, որտեղ շահառուները ստանում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սոցիալական ծառայություններ.».

4. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5) **ընտանիքում** և կենցաղային **բռնության ենթարկված անձ՝** ֆիզիկական անձ, այդ թվում ընտանիքի ներսում բռնությանը ականատես երեխան, որը, ըստ նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշման կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի, տուժել է ընտանիքում և կենցաղային բռնությունից.»,
5. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ «6) **խնամքի տակ գտնվող անձ՝** երեխա, տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձ, առողջական կամ այլ հանգամանքներով անօգնական վիճակում գտնվող անձ, որը բնակվում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձի հետ, և որին վերջինս մշտապես հոգ է տանում.».
6. Լրացնել նոր՝ 10-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.՝ «10) **զուգընկեր**՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից:»:

**Հոդված 7.** Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «գործ հարուցելուն» բառը փոխարինել «վարույթ նախաձեռնելուն» բառով:

**Հոդված 8.** Օրենքի 6-րդ հոդվածի՝

1. առաջին մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ բռնության դեպքը տեղի է ունեցել առաջին անգամ, առկա չէ հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն:»:

2. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Նախազգուշացում կիրառելու մասին ոստիկանության իրավասու ծառայողի կայացրած պատճառաբանված

որոշման պատճենը ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին հանձնվում է ստորագրությամբ՝ առձեռն: Դեպքի վայրում նրա բացակայության դեպքում որոշման բովանդակությունը նրան պարզաբանվում է հեռախոսակապի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում որոշման պատճենն ուղարկվում է նրա էլեկտրոնային փոստին կամ հաշվառման վայր՝ պատվիրված փոստի միջոցով: Նախազգուշացումն ուժի մեջ է մտնում սույն հոդվածով սահմանված եղանակներից որևէ մեկով ծանուցելու պահից:».

3. 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 9.** Օրենքի 7-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Եթե ընտանիքի մեկ անդամը, զուգընկերը կամ նախկին զուգընկերը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, այդ թվում՝ երեխայի ներկայությամբ, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում:»:
2. 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը սահմանվում է 20-25 օր:»:
3. 7-րդ մասը «փոստի միջոցով:» բառերից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Անհետաձգելի միջամտության որոշման պատճենը հանձնվում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձին առձեռն, իսկ դրա անհնարինության դեպքում՝ որոշման պատճենն ուղարկվում է նրա էլեկտրոնային փոստին կամ նրա հաշվառման վայրի հասցեով՝ պատվիրված փոստի միջոցով:»:
4. 8-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված սահմանափակումը կիրառելիս ոստիկանության իրավասու ծառայողը չի հեռանում մինչև ընտանիքում և

կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից առաջին անհրաժեշտության իրերը հավաքելը և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի բնակության տարածքից հեռանալը:»:

5. 8-րդ մասը «ողղեկցությամբ:» բառից հետո լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. «Այն դեպքերում, երբ ոստիկանության ծառայողը որոշում է կայացնում ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձին ապաստարան տեղափոխելու մասին, իրավասու ծառայողը չի հեռանում մինչև ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձի և նրա խնամքի տակ գտնվող անձանց կողմից բնակության վայրից անձնական իրերը հավաքելը:»:
6. 10-րդ մասի 3-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝. «Անհետաձգելի միջամտության որոշումը նույն անձի կողմից վերացվում է մինչև դրա ժամկետի լրանալը դատարանի կողմից պաշտպանական որոշում կայացվելու դեպքում:»:
7. 13-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 10.** Օրենքի 8-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.Պաշտպանական որոշումը կայացվում է 4-12 ամիս ժամկետով և կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ երկարաձգվել՝ մինչև վեց ամիս ժամկետով:»:
2. 5-րդ մասի 1-ին կետի «այլ վայրերի» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ ժամանակավոր կացարանի» բառերը:
3. 10-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 11.** Օրենքի 10-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 12.** Օրենքի 11-րդ հոդվածի՝

1. Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ «Ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման

վերցնելը և հաշվառումից հանելը, ընտանիքում և կենցաղային բռնության դեպքերի մշտադիտարկումը»:

2. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ «1. Ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձը, որի նկատմամբ կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ինչպես նաև ընտանիքում և կենցաղային բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունեցող անձը ոստիկանության կողմից վերցվում են կանխարգելիչ հաշվառման:»,
3. Լրացնել նոր մասով, հետևյալ բովանդակությամբ.՝ «1.1. Աջակցության կենտրոն դիմած շահառուների շրջանում ընտանիքում և կենցաղային բռնությունը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկումն իրականացնում է աջակցության կենտրոնի սոցիալական աշխատողը՝ բռնության ենթարկված անձանց հետ հանդիպումների, զանգերի և հաղորդակցման այլ միջոցների կիրառմամբ՝ Լիազոր մարմնի սահմանած կարգով:»
4. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝. «3.Ոստիկանության իրավասու ծառայողը կանխարգելիչ հաշվառման շրջանակում ամսական առնվազն մեկ հանդիպում է ունենում հաշվառման վերցված և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց հետ և բացատրական աշխատանքներ իրականացնում:».
5. Լրացնել նոր՝ 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.՝ «4. Հոգեկան առողջության կենտրոնում հաշվառված անձանց նկատմամբ կանխարգելիչ բնույթի աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համապատասխան մասնագետի որոշմամբ՝ ոստիկանությանը ներկայացված գրության հիման վրա՝ հոգեբույժի պարտադիր մասնակցությամբ:»:

**Հոդված 13.** Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «Հոգեբուժական օգնության մասին» բառերը փոխարինել «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» բառերով:

**Հոդված 14.** Օրենքի 13-րդ հոդվածը՝

1. 1-ին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերում «լիազոր հանրապետական գործադիր մարմինը» բառերը փոխարինել «պետական կառավարման համակարգի լիազոր մարմինը» բառերով:

2. լրացնել նոր՝ 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «3. Ընտանիքում և կենցաղային բռնության դեմ պայքարի պետական ռազմավարությունը, բռնության ենթարկված անձանց ուղղորդման կարգը և բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիոն ծրագիրը հաստատում է Կառավարությունը:»:

**Հոդված 15.** Օրենքի 14-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում Լիազոր մարմինը՝

1) մշակում է պետական ռազմավարությունը և համակարգում դրանից բխող միջոցառումների իրականացումը.

2) մշակում է ընտանիքում և կենցաղային բռնությունից տուժած անձանց ուղղորդման կարգը.

3) իրականացնում է ընտանիքում և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով՝ ընդգրկելով ինչպես ոստիկանության, քննչական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի, այնպես էլ վերջիններիս չգրանցած աջակցության կենտրոնների և ապաստարանների տրամադրած տվյալները, և դրանց ընթացքի վերաբերյալ վիճակագրության վարում, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում.

4) ուսումնասիրում է ընտանիքում և կենցաղային բռնության պատճառները, պայմանները և հետևանքները, մշակում դրանց հաղթահարմանն ուղղված պետական ծրագրեր.

5) իրականացնում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին սոցիալական ծառայություններ տրամադրող աջակցության

կենտրոնների և ապաստարանների հավաստագրումը՝ Կառավարության սահմանած կարգով.

6) հիմնադրում է ապաստարաններ և աջակցության կենտրոններ, ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ կնքում ապաստարանի և աջակցության կենտրոնի ֆինանսավորման պայմանագիր՝ կառավարության սահմանած պայմանագրի օրինակելի ձևի հիման վրա և վերահսկողություն իրականացնում իր կողմից մասնակի կամ ամբողջապես ֆինանսավորվող ապաստարանների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ ֆինանսական միջոցների օգտագործման մասով.

7) վերահսկում է ապաստարանների կողմից Կառավարության սահմանած՝ ապաստարանին և դրա անձնակազմին ներկայացվող պահանջների պահպանումը,

8) պարբերաբար կազմակերպում է աջակցության կենտրոնների և ապաստարանների աշխատակիցների վերապատրաստում, այդ թվում՝ ոլորտի հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ.

9) հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ՝ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածների համար նախատեսված անվճար «Թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարները, որոնք աջակցության կենտրոնները և ապաստարանները պարտավոր են ունենալ), որոնցով ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապ հաստատել աջակցության կենտրոնների և ապաստարանների աշխատակցի կամ կենտրոնների կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում՝ նաև նրանց համար մատչելի օգնություն.

10) ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին ժամանակավոր աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ բացում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամար և տնօրինում այն՝ կառավարության սահմանած կարգով: Հաշվեհամարի միջոցները ձևավորվում

են պետական բյուջեի հատկացումներից, ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցներից.

11) ընտանիքում և կենցաղային բռնությունը կանխարգելելու նպատակով՝ աջակցման կենտրոն և ապաստարան դիմած անձանց շրջանում սահմանում է մշտադիտարկման իրականացման մեխանիզմները.

12) Լիազոր մարմնին ենթակա Միասնական սոցիալական ծառայությունը համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և ներպետական հասարակական կազմակերպությունների հետ՝ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց՝ ըստ անհրաժեշտության, սոցիալական ծառայություններից օգտվելու գործընթացում աջակցելու և համապատասխան մարմիններ ուղղորդելու համար:

2. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.«2. Լիազոր մարմնի ղեկավարին կից գործում է Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման խորհուրդը, որը նրան առաջարկություններ է ներկայացնում ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման բնագավառում պետական ռազմավարության, դրանից բխող ծրագրերի, օրենսդրական բարեփոխումների, հանրության իրազեկման միջոցառումների և այլ հարցերի վերաբերյալ: Խորհրդի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական հիմունքներով: Խորհրդի կազմում ընդգրկվում են՝

1) պետական կառավարման համակարգի մարմինների, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, դատախազության ներկայացուցիչներ.

2) հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ.

3) աջակցության կենտրոնների և ապաստարանների ներկայացուցիչներ:»:

**Հոդված 16.** Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 1–ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում Ներքին գործերի նախարարությունը՝

1) ապահովում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաստումը, որի կարգը սահմանում է ներքին գործերի նախարարը. մասնագիտացված ստորաբաժանման հատուկ համազգեստը սահմանում է Կառավարությունը, իսկ վերապատրաստման կարգը և գործունեության այլ առանձնահատկությունները՝ ներքին գործերի նախարարը:»:

2. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ «2) սահմանում է կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը, ինչպես նաև կանխարգելիչ հաշվառման շրջանակում ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրելը կանխարգելելու նպատակով ամսական առնվազն մեկ հանդիպում ունենում հաշվառված անձանց հետ.»:
3. 3-րդ կետի «անձանց» բառից հետո լրացնել «իրազեկում է սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված պաշտպանության միջոցների մասին,» բառերը:

**Հոդված 17.** Օրենքի 16-րդ հոդվածի՝

1. Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կրթության ոլորտի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի լիազորություններն ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման բնագավառում»:
2. 1-ին մասի «լիազոր հանրապետական գործադիր մարմինը» բառերը փոխարինել «պետական կառավարման համակարգի լիազոր մարմինը» բառերով:

**Հոդված 18.** Օրենքի 17-րդ հոդվածի՝

1. Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Առողջապահության ոլորտի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի

լիազորություններն ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում»,

2. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանությ ան բնագավառում առողջապահության ոլորտի պետական կառավարման հա մակարգի լիազոր մարմինը՝
1)ապահովում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց համար անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասա րկում՝ բռնության դեպքով պայմանավորված անձի առողջական խնդիրների լ ուծման նպատակով.
2)բժշկական հաստատություններում պարբերական վերապատրաստումներ է իրականացնում ընտանիքում և կենցաղային բռնության արդյունքում բժշկակ ան օգնության դիմած անձանց հասանելի հոգեբանական և այլ ծառայությունն երի մասին տեղեկացնելու,նրանց աջակցության կենտրոններ ուղղորդելու վեր աբերյալ:»:

**Հոդված 19.** Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 5-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
2. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6) նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների պատճեններն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածին առաջարկում է սույն օրենքով նախատեսված աջակցությունների տրամադրում.»:
3. 7-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,
4. Լրացնել նոր՝ 10-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ.՝ «10) ներկայացնում է ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելմանը վերաբերող քաղաքականության և ընտանիքում և կենցաղային բռնությունից տուժած անձանց մատուցվող ծառայությունների բարելավմանն ուղղված առաջարկներ»:

**Հոդված 20.** Օրենքի 20-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ «2. Լիազոր մարմինը ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ կարող է կնքել նրանց կողմից ապաստարան հիմնադրելու կամ արդեն հիմնադրված ապաստարանի գործունեության աջակցության մասին պայմանագիր, որը պետք է պարունակի նաև այդ ապաստարանի գործունեության նկատմամբ Լիազոր մարմնի՝ հսկողություն իրականացնելու կարգը, այդ թվում՝ տրամադրված ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ: Ֆինանսավորվող ոչ առևտրային իրավաբանական անձն ընտրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվող մրցույթով:»:
2. 4-րդ մասի «կրթության պայմաններով» բառերից հետո լրացնել «, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմաններով» բառերը,
3. 5-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ «2) աջակցության կենտրոնը՝ գնահատված կարիքի հիման վրա»,

**Հոդված 21.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Տեղեկանք

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

## ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, նպատակ ունենալով՝

ապահովել ընտանիքի՝ որպես հասարակության բնական ու հիմնական բջջի, հատուկ պաշտպանությունը,

ձևավորել ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածների անվտանգության և պաշտպանության, նրանց իրավունքների և օրինական շահերի ապահովման համար անհրաժեշտ իրավական կառուցակարգեր,

ապահովել ընտանիքի անդամների անվտանգությունը և նպաստել ընտանիքում համերաշխության վերականգնմանը,

կանոնակարգել ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության ուղղությամբ պատասխանատու մարմինների գործունեությունը,

ապահովել ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին հոգեբանական, նյութական և սոցիալական աջակցության տրամադրման և նրանց

սոցիալական վերականգնման համար պատասխանատու մարմինների գործունեության համար իրավական հիմքեր, ընդունում է սույն օրենքը:

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կանոնակարգում է ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության կազմակերպաիրավական հիմքերը, սահմանում է ընտանիքում և կենցաղային բռնության հասկացությունը, ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրավասու մարմինների լիազորությունները, պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը, ~~ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման,~~ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկությունների իրավական պաշտպանության առանձնահատկությունները:

**Հոդված 2. Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության սկզբունքները**

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց պաշտոնատար անձինք և հասարակական կազմակերպությունները ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրենց գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում են՝

1) ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց անվտանգության և պաշտպանության ապահովման առաջնայնության,

2) ընտանիքի՝ որպես հասարակության բնական և հիմնական բջջի աջակցության, ընտանիքում ավանդական արժեքների ամրապնդման և ընտանիքում համերաշխության վերականգնման,

3) երեխայի լավագույն շահերի առաջնահերթության,

4) իրավահավասարության ապահովման և խտրականության արգելքի,

5) արդարադատության մատչելիության,

6) մասնավոր և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկությունների անձեռնմխելիության,

7) պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության սկզբունքներով:

Հոդված 3. **Ընտանիքում և կենցաղային բռնությունը և դրա տեսակները**

1. Ընտանիքում և կենցաղային բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնի արարքը, անտեսումը կամ հետամտումը, որոնք կատարվել են ընտանիքի անդամների կամ զուգընկերների կամ նախկին զուգընկերների միջև:

2. Ընտանիքում և կենցաղային բռնության տեսակներն են՝

**1) Ֆիզիկական բռնություն՝** անձի կամքին հակառակ ֆիզիկական բնույթի բռնի արարքը՝ ներառյալ բժշկական, այդ թվում հոգեբուժական բնույթի միջամտությունների ենթարկվելուն պարտադրելը, բժշկական օգնություն ստանալուց զրկելը կամ նման օգնությանը խոչընդոտելը, ֆիզիկական ցավ պատճառելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սպանությունը, առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, ֆիզիկական ներգործությունը, ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը.

~~1) **ֆիզիկական բռնություն՝** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը.~~

2) **սեռական բռնություն՝** անձի կամքին հակառակ սեքսուալ բնույթի գործողություններ, այդ թվում՝ անձի սեռական օրգաններին և մարմնի մասերին անցանկալի հպումները, անձին երրորդ անձի հետ սեռական բնույթի գործողություններում ներգրավելը, կուսության ստուգումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները.

~~2) **սեռական բռնություն՝** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները.~~

**3) հոգեբանական բռնություն՝** անձին հոգեբանական ճնշում, հոգեկան տառապանք պատճառելը, ներառյալ՝ անձի ինքնագնահատականի և արժանապատվության նվաստացումը, սեփական երեխաների, ընկերների և հարազատների հետ շփումներն արգելելը կամ դրանց խոչընդոտելը, ինչպես նաև վերահսկողություն կիրառելը, ինքնավնասման կամ ինքնասպանության սպառնալիքով ճնշում գործադրելը, տնտեսական բռնություն գործադրելու, տնային կենդանիներին վնասելու սպառնալիքը, դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ հարազատի կամ զուգընկերոջ կամ ընկերոջ կամ խնամքի տակ գտնվողի անվտանգության համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ հոգեկան ներգործությունը կամ հոգեկան ուժեղ

տառապանք պատճառելը, ինքնասպանության հասցնելը կամ հակելը, հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը.

~~3) **հոգեբանական բռնություն՝** դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը.~~

**4) տնտեսական բռնություն՝** անձին հարկադրված նյութական կախվածության մեջ դնելը, նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք, հիգիենիկ պարագաներ, օրենքով սահմանված նպաստ կամ կենսաթոշակ, այդ թվում՝ երեխայի համար տրամադրվող, աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ) զրկելը, անձին սեփականության իրավունքով պատկանող կամ նրա կողմից տնօրինվող գույքը վնասելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կամքին հակառակ նրան վարկային կամ ֆինանսական գործարքներում ներգրավելը, անձին սեփականության իրավունքով պատկանող միջոցները և գույքը կտակելուն կամ նվիրաբերելուն հարկադրելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը.

5) **անտեսում՝** ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ,

կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցության անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

6) Հետամտում՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ անձին հետամտելը:

Հոդված 4. **Օրենքի հիմնական հասկացությունները**

-

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ընտանիքի անդամներ՝**

~~ա.~~ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները,

~~բ. համատեղ բնակվող~~ տատ, պապ, քույր և եղբայր (նաև համամայր կամ համահայր), ամուսնու քույր, ամուսնու եղբայր, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը.

2) «**աջակցության կենտրոն՝** ընտանիքում և կենցաղային բռնության կամ ենթադրաբար ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց, իսկ անհրաժեշտության դեպքում այդ անձանց ընտանիքների անդամներին

սոցիալական աջակցություն տրամադրող կազմակերպություն՝ հավաստագրված Լիազոր մարմնի կողմից.

~~«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող պետական կազմակերպություն.~~

~~3) ապաստարան (ընտանիքում բռնության ենթարկված անձի հոգածության կենտրոն)՝ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ եղող անձանց՝ սույն օրենքով սահմանված դեպքերում տրամադրվող անվտանգ ժամանակավոր կացարան, որտեղ նրանք օգտվում են «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սոցիալական ծառայություններից.~~

3) **ապաստարան (ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձի հոգածության կենտրոն)՝** ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց՝ սույն օրենքով սահմանված դեպքերում տրամադրվող անվտանգ ժամանակավոր կացարան, հավաստագրված Լիազոր մարմնի կողմից, որտեղ շահառուները ստանում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սոցիալական ծառայություններ.

4) **ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձ՝** ֆիզիկական անձ, որի նկատմամբ սույն օրենքով սահմանված կարգով կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում.

5) **ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձ՝** ֆիզիկական անձ, այդ թվում ընտանիքի ներսում բռնությանը ականատես երեխան, որը, ըստ նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշման կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի, տուժել է ընտանիքում բռնությունից.

~~5) **ընտանիքում բռնության ենթարկված անձ՝** ֆիզիկական անձ, որը, ըստ նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշման~~

~~կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի, տուժել է ընտանիքում բռնությունից.~~

6) **խնամքի տակ ~~եղող~~ գտնվող անձ՝** երեխա, տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձ, առողջական կամ այլ հանգամանքներով անօգնական վիճակում գտնվող անձ, որը բնակվում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձի հետ, և որին վերջինս մշտապես հոգ է տանում.

7) **ոստիկանության իրավասու ծառայող՝** ոստիկանության՝ ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազորություն ունեցող ծառայող.

8) **ռեաբիլիտացիոն ծրագիր՝** համալիր միջոցառումների ծրագիր, որն ուղղված է բռնություն գործադրած անձին հոգեբանական և սոցիալական աջակցության տրամադրման, առողջության վերականգնման, վնասակար սովորույթներից (ալկոհոլամոլություն, թմրամոլություն, թունամոլություն, խաղամոլություն) ձերբազատման միջոցով նրա կողմից կրկին բռնություն գործադրելու կանխմանը:

9) **ոստիկանության իրավասու ծառայող՝** ոստիկանության՝ ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազորություն ունեցող ծառայող.

10) զուգընկեր՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է միրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից:

## ԳԼՈՒԽ 2

## ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

### Հոդված 5. Ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված

**անձանց պաշտպանության միջոցների տեսակները**

1. Ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներն են՝

1) նախազգուշացումը.

2) անհետաձգելի միջամտության որոշումը.

3) պաշտպանական որոշումը:

2. Պաշտպանության միջոցների կիրառման մասին կայացվում է պատճառաբանված որոշում: Պաշտպանության միջոցները կիրառվում են՝ առաջնորդվելով սույն օրենքով սահմանված սկզբունքներով և ապահովելով միջամտության համաչափությունը: Դրանց կիրառումը չի խոչընդոտում օրենքով սահմանված կարգով քրեական ~~գործ~~վարույթ ~~հարուցելուն~~ նախաձեռնելուն և քրեական հետապնդում իրականացնելուն:

Հոդված 6. Նախազգուշացումը

1. Նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ~~ընտանիքում~~ բռնության դեպքը ~~ոստիկանությունը հայտնաբերել է~~ տեղի է ունեցել առաջին անգամ~~,~~ առկա չէ հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին ~~կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում,~~ և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ներառում է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին իրազեկում: Նախազգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում:

~~2. Նախազգուշացում կիրառելու մասին ոստիկանության իրավասու ծառայողի կայացրած պատճառաբանված որոշման պատճենը ընտանիքում բռնություն գործադրած անձին հանձնվում է ստորագրությամբ՝ առձեռն: Դեպքի վայրում նրա բացակայության դեպքում որոշման բովանդակությունը նրան պարզաբանվում է հեռախոսակապի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում որոշման պատճենն ուղարկվում է նրա հաշվառման վայր պաշտոնական էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով:~~

2. Նախազգուշացում կիրառելու մասին ոստիկանության իրավասու ծառայողի կայացրած պատճառաբանված որոշման պատճենը ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին հանձնվում է ստորագրությամբ՝ առձեռն: Դեպքի վայրում նրա բացակայության դեպքում որոշման բովանդակությունը նրան պարզաբանվում է հեռախոսակապի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում որոշման պատճենն ուղարկվում է նրա էլեկտրոնային փոստին կամ հաշվառման վայր՝ պատվիրված փոստի միջոցով: Նախազգուշացումն ուժի մեջ է մտնում սույն հոդվածով սահմանված եղանակներից որևէ մեկով ծանուցելու պահից:

3. Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին հանձնվելուց կամ դրա բովանդակությունը նրան հեռախոսակապի միջոցով պարզաբանվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, ինչպես նաև դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում:

~~4. Նախազգուշացում կիրառելու մասին պատճառաբանված որոշման պատճենը այն կայացրած ոստիկանության իրավասու ծառայողն ուղարկում է ընտանիքում բռնություն գործադրած անձի մշտական բնակության վայրի աջակցության կենտրոն, որը հնարավորին չափ սեղմ ժամկետում ընտանիքում բռնություն գործադրած անձին առաջարկում է ռեաբիլիտացիոն ծրագրով նախատեսված ծառայությունները բռնության նոր դրսևորումները կանխարգելելու նպատակով:~~

Հոդված 7. Անհետաձգելի միջամտության որոշումը

1. Եթե ընտանիքի մեկ անդամը, զուգընկերը կամ նախկին զուգընկերը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, այդ թվում՝ երեխայի ներկայությամբ և առկա է

հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:

2. Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը ~~չի կարող գերազանցել քսան օրը:~~ սահմանվում է 20-25 օր: Եթե անհետաձգելի որոշման գործողության ընթացքում դատարանը քննում է պաշտպանական որոշման դիմում, ապա այն ուժի մեջ է մնում մինչև դատարանի կողմից որոշում կայացվելը:

3. Անհետաձգելի միջամտության որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները.

1) հարկադրել ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այնտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը.

2) արգելել ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ ~~եղրդ~~գտնվող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր.

3) արգելել ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ ~~եղրդ~~գտնվող անձանց), որն ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձի մեջ

ողջամտորեն հիմնավոր վախ կիարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը.

4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը: Այս սահմանափակումը կիրառելիս որոշման մասին իրազեկելու պահին ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի տիրապետման տակ զենք լինելու դեպքում նա այն անհապաղ հանձնում է ~~որոշումը կայացրած~~ ոստիկանության իրավասու ծառայողին.

5) արգելել ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ ~~եղող~~գտնվող անձանց հետ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումները կարող են կիրառվել առանձին կամ համակցության մեջ՝ նշելով դրանց կատարման համար միևնույն կամ տարբեր ժամկետներ: Սահմանափակման միջոցներն ընտրելիս որոշում կայացնողն առաջնորդվում է սույն օրենքով սահմանված սկզբունքներով՝ ապահովելով սահմանափակման համաչափությունը:

5. Եթե անմիջականորեն սպառնացող վտանգի տակ գտնվողն անչափահաս կամ անգործունակ անձ է, ապա որոշումը կայացրած ոստիկանության իրավասու ծառայողն այդ որոշման պատճենը և համապատասխան արձանագրությունն անհապաղ ուղարկում է խնամակալության և հոգաբարձության մարմին, որը, գնահատելով իրավիճակը, ձեռնարկում է օրենքով և իր կանոնադրությամբ նախատեսված գործողություններ:

6. Եթե անհետաձգելի միջամտության որոշումը կիրառվում է անչափահաս կամ անգործունակ անձի հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցչի նկատմամբ, ապա երեխաների և անգործունակ անձանց ժամանակավոր խնամքը կազմակերպում է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ որոշման

պատճենն ստանալուց հետո՝ հնարավորին չափ սեղմ ժամկետում, բայց ոչ ավելի, քան 24 ժամում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առաջնորդվելով նրանց շահերով:

7. Անհետաձգելի միջամտության որոշում կիրառելու մասին ոստիկանության իրավասու ծառայողի կայացրած պատճառաբանված որոշումն ուժի մեջ է մտնում ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին դրա մասին իրազեկելու պահից: Դրա պատճենն ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին հանձնվում է ստորագրությամբ՝ առձեռն, դեպքի վայրում նրա բացակայության դեպքում որոշման բովանդակությունը նրան պարզաբանվում է հեռախոսակապի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում որոշման պատճենն ուղարկվում է նրա հաշվառման վայր պաշտոնական էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով: Անհետաձգելի միջամտության որոշման պատճենը հանձնվում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձին առձեռն, իսկ դրա անհնարինության դեպքում՝ որոշման պատճենն ուղարկվում է նրա էլեկտրոնային փոստին կամ նրա հաշվառման վայրի հասցեով՝ պատվիրված փոստի միջոցով:

8. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված սահմանափակումը կիրառելիս ~~անհետաձգելի միջամտության որոշում կայացնող~~ ոստիկանության իրավասու–ծառայողը չի հեռանում մինչև ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից առաջին անհրաժեշտության իրերը հավաքելը և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի բնակության տարածքից հեռանալը~~վայրը լքելը~~: Ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձը կարող է որոշումն ուժի մեջ մտնելուց հետո իր անձնական իրերն այդ վայրից վերցնել միայն մեկ անգամ՝ ոստիկանության իրավասու ծառայողի ուղեկցությամբ: Այն դեպքերում, երբ ոստիկանության ծառայողը որոշում է կայացնում ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձին ապաստարան տեղափոխելու մասին, իրավասու ծառայողը չի հեռանում մինչև ընտանիքում և կենցաղային բռնության

ենթարկված անձի և նրա խնամքի տակ գտնվող անձանց կողմից բնակության վայրից անձնական իրերը հավաքելը:

9. Անհետաձգելի միջամտության որոշում կայացնող ոստիկանության իրավասու ծառայողը որոշման պատճենը և համապատասխան արձանագրությունն անհապաղ ներկայացնում է իր ստորաբաժանման ղեկավարին:

10. Ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք ուղղված են ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից անհետաձգելի միջամտության որոշմամբ իր վրա դրված պարտականությունների չկատարմանը: Ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձի կողմից դիտավորությամբ պարբերաբար նման գործողություններ կատարելու դեպքում անհետաձգելի միջամտության որոշումը կարող է վերացնել այն կայացրած ոստիկանության իրավասու ծառայողը:

~~Անհետաձգելի միջամտության որոշումը նույն անձի կողմից վերացվում է ընտանիքում սույն օրենքով նախատեսված հաշտեցման գործընթացի արդյունքում հաշտություն կնքելու, ինչպես նաև մինչև դրա ժամկետի լրանալը դատարանի կողմից պաշտպանական որոշում կայացվելու դեպքերում:~~

Անհետաձգելի միջամտության որոշումը նույն անձի կողմից վերացվում է մինչև դրա ժամկետի լրանալը դատարանի կողմից պաշտպանական որոշում կայացվելու դեպքում:

11. Անհետաձգելի միջամտության որոշումն ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից կատարվելու նկատմամբ հսկողություն է իրականացնում ոստիկանությունը: Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված անհետաձգելի միջամտության որոշումների կատարման նկատմամբ ոստիկանության կողմից իրականացվում է նաև էլեկտրոնային հսկողություն: Էլեկտրոնային հսկողության

միջոցների կիրառման և ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

11.1. Էլեկտրոնային հսկողություն կիրառելիս պետք է նվազագույնի հասցվի անձանց անձնական եւ ընտանեկան կյանքի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունը: Էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալները ոչնչացվում են որոշման կատարման ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն մասով նախատեսված դեպքի: Եթե էլեկտրոնային հսկողության միջոցներով հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում, ապա տվյալները պահվում են մինչեւ իրավախախտման դեպքի քննության կամ ծառայողական քննության ավարտը: Էլեկտրոնային հսկողության համակարգը պետք է ունենա օրենսդրությամբ սահմանված բավարար պաշտպանվածության մակարդակ:

12. Անհետաձգելի միջամտության որոշման պատճենն այն կայացրած ոստիկանության իրավասու ծառայողն ուղարկում է ընտանիքում <u>և կենցաղային</u> բռնության ենթարկված անձի մշտական բնակության վայրի աջակցության կենտրոն:

~~13. Սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված սահմանափակումը չի գործում սույն օրենքով նախատեսված հաշտեցման գործընթացի շրջանակում ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև աջակցության կենտրոնի թույլտվությամբ կենտրոնի տարածքում կամ կենտրոնի համապատասխան մասնագետի ներկայությամբ կազմակերպվող հանդիպման ժամանակ:~~

14. Անհետաձգելի միջամտության որոշման պահանջներն ընտանիքում <u>և կենցաղային</u> բռնություն գործադրած անձի կողմից չկատարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

15. Անհետաձգելի միջամտության որոշման մեջ նշվում են դրա բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին որոշումը կարող է բողոքարկվել, ինչպես նաև այն խախտելու համար օրենքով նախատեսված

պատասխանատվության միջոցները: Անհետաձգելի միջամտության որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին դրա մասին իրազեկելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, ինչպես նաև դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Որոշման դեմ բողոք բերելը չի կասեցնում որոշման կատարումը: Վարչական բողոքը քննվում և դրա հիման վրա որոշում է կայացվում այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Հոդված 8. Պաշտպանական որոշումը

1. Պաշտպանական որոշման համար դատարան կարող է դիմել ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձը կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնը: Եթե ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածն անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձ է, ապա պաշտպանական որոշման համար դատարան կարող են դիմել նրա մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչը և խնամակալության ու հոգաբարձության մարմինը:

2. Անհետաձգելի միջամտության որոշման ուժի մեջ լինելը չի բացառում պաշտպանական որոշման համար դիմելու հնարավորությունը:

3. Պաշտպանական որոշումը կայացվում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի և նրա խնամքի տակ ~~եղողգտնվող~~ անձանց պաշտպանելու և ընտանիքում և կենցաղային բռնության նոր դրսևորումները կանխարգելելու նպատակով:

4. Պաշտպանական որոշումը կայացվում է ~~մինչև~~ ~~6~~4-12 ամիս ժամկետով և կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ ~~2 անգամ~~ երկարաձգվել~~՝~~ ~~յուրաքանչյուր անգամ առավելագույնը~~ մինչև վեց~~3~~ ամիս ժամկետով:

5. Պաշտպանական որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները.

1) հարկադրել ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի բնակության վայրից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը: Այս սահմանափակման ժամկետը սահմանելիս դատարանը հաշվի է առնում ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ ~~եղող~~գտնվող անձանց ապաստարան տեղափոխելու հնարավորությունը և նպատակահարմարությունը, ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի համար բնակության այլ վայրերի, այդ թվում՝ ժամանակավոր կացարանի մատչելիությունը.

2) արգելել ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ ~~եղող~~գտնվող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր.

3) արգելել ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ ~~եղող~~գտնվող անձանց), որն ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը.

4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը բռնություն գործադրած անձի տիրապետման տակ եղած զենքն ի պահ հանձնել ոստիկանություն.

5) ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել՝ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի հետ

կիսելու իրենց համատեղ անչափահաս կամ չափահաս անաշխատունակ երեխաների, ինչպես նաև իրենց համատեղ խնամքի տակ եղողգտնվող անձանց խնամքի ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով սահմանված ալիմենտային պարտավորությունների համար վճարման ենթակա գումարի չափով: Դատարանը կարող է ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել հոգալու ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի այլ անհրաժեշտ ծախսերը, որոնք ծագել են գործադրված բռնության պատճառով.

6) անհրաժեշտության դեպքում արգելել երեխաների հետ տեսակցությունները.

7) արգելել ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղողգտնվող անձանց հետ.

8) ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի վրա դնել պարտականություն անցնելու ռեաբիլիտացիոն ծրագիր:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված սահմանափակումները կարող են կիրառվել առանձին կամ համակցության մեջ՝ նշելով դրանց կատարման համար միևնույն կամ տարբեր ժամկետներ:

7. Պաշտպանական որոշման դիմումին ներկայացվող պահանջները, դրանք քննելու կարգը, դատարանի կողմից ընդունվող ակտերը, դրանք բողոքարկելու կարգը և պաշտպանական որոշման դադարման հիմքերը նախատեսվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի դատական ներկայացուցչության համար հանրային պաշտպան տրամադրելու հիմքերը և կարգը նախատեսվում են «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

8. Եթե ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածն անչափահաս կամ անգործունակ անձ է, և պաշտպանական որոշումը կիրառվում է նրա հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցչի (կամ ներկայացուցիչների) նկատմամբ, ապա դատարանը խնամակալության և հոգաբարձության մարմնին հանձնարարում է լուծել երեխայի կամ անգործունակ անձի ժամանակավոր խնամքի հարցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ առաջնորդվելով նրանց շահերով:

9. Պաշտպանական որոշումն ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից կատարվելու նկատմամբ հսկողություն է իրականացնում ոստիկանությունը: Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված սահմանափակումը կիրառելիս ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձը կարող է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի բնակության վայրից իր իրերը վերցնել երկու ամիսը մեկ անգամ՝ ոստիկանության իրավասու ծառայողի ուղեկցությամբ: Սույն հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով նախատեսված սահմանափակումը կիրառելիս որոշման կայացման պահին ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի տիրապետման տակ զենք լինելու դեպքում նա այն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 10 ժամվա ընթացքում հանձնում է ոստիկանություն: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունն ապահովում է սույն հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետով նախատեսված պարտականության կատարումը, իսկ Լիազոր մարմինը հետևում է նույն մասի 8-րդ կետով նախատեսված պարտականության կատարմանը: Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված պաշտպանական որոշումների կատարումը դատարանի որոշմամբ ոստիկանությունը կարող է իրականացնել նաեւ էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ:

9.1. Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալները ոչնչացվում են որոշմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն մասով նախատեսված դեպքի: Եթե էլեկտրոնային հսկողության միջոցներով հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում, ապա տվյալները պահվում են մինչեւ իրավախախտման դեպքի քննության կամ ծառայողական քննության ավարտը: Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ պաշտպանական որոշումների կատարման ապահովման նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 7-րդ հոդվածի 11.1-ին մասով նախատեսված կարգավորումները:

~~10. Սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված սահմանափակումը չի գործում սույն օրենքով նախատեսված հաշտեցման գործընթացի շրջանակում ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքումբռնություն գործադրած անձանց միջև աջակցության կենտրոնի թույլտվությամբ կենտրոնում կամ կենտրոնի համապատասխան մասնագետի ներկայությամբ կազմակերպվող հանդիպման ժամանակ:~~

11. Պաշտպանական որոշման պահանջներն ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից չկատարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Հոդված 9. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության դադարումը՝ կապված քրեական գործի հարուցման հետ

1.Ընտանիքում և կենցաղային բռնության փաստով հարուցված քրեական գործի շրջանակում ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրվելու, բժշկական հաստատությունում հարկադրաբար պահելու մասին որոշում կայացվելու կամ ընտանիքում և

կենցաղային բռնության ենթարկված անձի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելու, բնակարանը և այլ գույքը պահպանելու, պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելու, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելու կամ արտաքինը փոխելու պաշտպանության միջոցներ կիրառվելու դեպքերում՝ համապատասխան միջոցների կիրառման ժամկետով, դադարում է անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումներով նախատեսված այն սահմանափակումների գործողությունը, որոնք կապված են անձին, նրա բնակության կամ հաճախակի գտնվելու վայրերին մոտենալու արգելքի հետ:

2. Ընտանիքում և կենցաղային բռնության փաստով քրեական գործ հարուցվելուց հետո անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել և պաշտպանական որոշման համար դիմում կարող է ներկայացվել, եթե ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի ընտրվել, նրա նկատմամբ բժշկական հաստատությունում հարկադրաբար պահելու մասին որոշում չի կայացվել, և վարույթն իրականացնող մարմինը չի կիրառել սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտպանության միջոցները: Եթե ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ ընտրվել է կալանքը որպես խափանման միջոց, նրա նկատմամբ կայացվել է բժշկական հաստատությունում հարկադրաբար պահելու մասին որոշում, և վարույթն իրականացնող մարմինը կիրառել է սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտպանության միջոցները, ապա անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել և պաշտպանական որոշման համար դիմում կարող է ներկայացվել, եթե դրանցով նախատեսվող սահմանափակումը կապված չէ անձին, նրա բնակության կամ հաճախակի գտնվելու վայրերին մոտենալու արգելքի հետ:

~~Հոդված 10. Ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցումը~~

:

~~1. Ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցումն իրականացվում է անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության ընթացքում՝ Լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով:~~

~~2. Հաշտեցումն իրականացվում է ընտանիքում բռնություն գործադրած կամ ընտանիքում բռնության ենթարկված անձի դիմումով՝ ուղղված աջակցության կենտրոնին: Մինչև գործընթացն սկսելը աջակցության կենտրոնն ստանում է հաշտեցմանը մասնակցելու՝ մյուս կողմի գրավոր համաձայնությունը: Աջակցության կենտրոնը դադարեցնում է հաշտեցման գործընթացը, եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ ընտանիքում բռնության ենթարկված անձը դրան մասնակցում է սպառնալիքների ազդեցության ներքո:~~

~~3. Պաշտպանական որոշման գործողության ընթացքում հաշտություն կնքելու դեպքում ընտանիքում բռնության ենթարկված կամ բռնություն գործադրած անձը կարող է դիմել դատարան որոշումը վերացնելու նպատակով:~~

~~4. Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ընթացքում հաշտություն կնքելու դեպքում ընտանիքում բռնության ենթարկված կամ բռնություն գործադրած անձը կարող է դիմել այն կայացրած ոստիկանության իրավասու ծառայողին որոշումը վերացնելու նպատակով:~~

~~5. Հաշտեցում չի իրականացվում, եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ անգործունակ անձ է:~~

Հոդված 11. Ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելը և հաշվառումից հանելը, ընտանիքում և կենցաղային բռնության դեպքերի մշտադիտարկումը

~~1. Ընտանիքում բռնություն գործադրած անձը, որի նկատմամբ կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ինչպես նաև ընտանիքում բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունեցող չափահաս անձը ոստիկանության կողմից վերցվում են կանխարգելիչ հաշվառման: Կանխարգելիչ հաշվառման շրջանակում չափահաս անձի կողմից ընտանիքում բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկումն իրականացնում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի սոցիալական աշխատողը, իսկ անչափահաս անձի պարագայում՝ ոստիկանությունը՝ համապատասխանաբար Լիազոր մարմնի կամ ներքին գործերի նախարարի սահմանած կարգով:~~

<u>1. Ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձը, որի նկատմամբ կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ինչպես նաև ընտանիքում և կենցաղային բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունեցող անձը ոստիկանության կողմից վերցվում են կանխարգելիչ հաշվառման:</u>

<u>1.1. Աջակցության կենտրոն դիմած շահառուների շրջանում ընտանիքում և կենցաղային բռնությունը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկումն իրականացնում է աջակցության կենտրոնի սոցիալական աշխատողը՝ բռնության ենթարկված անձանց հետ հանդիպումների, զանգերի և հաղորդակցման այլ միջոցների կիրառմամբ՝ Լիազոր մարմնի սահմանած կարգով:</u>

2. Կանխարգելիչ հաշվառման վերցված անձը հանվում է հաշվառումից, եթե ընտանիքում <u>և կենցաղային</u> բռնության վերջին արարքից հետո՝ մեկ տարվա ընթացքում, այդ անձի նկատմամբ չի կայացվել նոր անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում կամ համապատասխան հանցագործության համար մեղադրական դատավճիռ:

3. Ոստիկանության իրավասու ծառայողը ~~և տարածքային մարմնի սոցիալական աշխատողը~~ կանխարգելիչ հաշվառման շրջանակում ամսական առնվազն մեկ հանդիպում ~~են~~է ունենում հաշվառման վերցված և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց հետ և բացատրական աշխատանքներ իրականացնում: ~~Տարածքային մարմնի սոցիալական աշխատողը մշտադիտարկման ընթացքում բռնության կրկնման վտանգ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնում է ոստիկանությանը:~~

4. Հոգեկան առողջության կենտրոնում հաշվառված անձանց նկատմամբ կանխարգելիչ բնույթի աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համապատասխան մասնագետի որոշմամբ՝ ոստիկանությանը ներկայացված գրության հիման վրա՝ հոգեբույժի պարտադիր մասնակցությամբ:

## Հոդված 12. Անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոցներ չկիրառելը

1. Անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումներ չեն կայացվում:

2. Ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անչափահաս անձը, եթե նրա արարքում բացակայում են հանցակազմի հատկանիշներ, ապա ոստիկանության կողմից ուղղորդվում է վերականգնողական ծրագրերի իրականացման համապատասխան համայնքային և պետական կենտրոններ՝ անչափահասների հանցավորության կանխարգելման բնագավառում Կառավարության սահմանած կարգի համաձայն:

3. Անգործունակ անձի կողմից ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրվելու դեպքում գործում են «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ~~«Հոգեբուժական օգնության մասին»~~ Հայաստանի Հանրապետության

օրենքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները:

## ԳԼՈՒԽ 3

## ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ՀԱՏՈՒԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հոդված 13. Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինները և հատուկ կառույցները

1. Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելումը և Ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառույթների շրջանակներում իրականացնում են՝

1) սոցիալական հարցերի ոլորտում պետական կառավարման համակարգի լիազոր մարմինը ~~լիազոր հանրապետական գործադիր մարմինը~~ (այսուհետ՝ Լիազոր մարմին).

2) ոստիկանությունը.

3) կրթության ոլորտի պետական կառավարման համակարգի լիազոր մարմինը ~~լիազոր հանրապետական գործադիր մարմինը~~.

4) առողջապահության ոլորտի պետական կառավարման համակարգի լիազոր մարմինը ~~լիազոր հանրապետական գործադիր մարմինը~~.

5) խնամակալության և հոգաբարձության մարմինները.

6) ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցները՝

ա. աջակցության կենտրոնները,

բ. ապաստարանները:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում աջակցում են ընտանիքում և կենցաղային բռնության դեմ պայքարին և այդ բնագավառում համագործակցում են Լիազոր մարմնի հետ: Նշված մարմինները նաև մասնակցում են նշված բնագավառում հանրության իրազեկմանը, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին սոցիալական և նյութական աջակցություն ցուցաբերելուն ուղղված միջոցառումների իրականացմանը:

3. Ընտանիքում և կենցաղային բռնության դեմ պայքարի պետական ռազմավարությունը, բռնության ենթարկված անձանց ուղղորդման կարգը և բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիոն ծրագիրը հաստատում է Կառավարությունը:

Հոդված 14. Լիազոր մարմնի լիազորություններն ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում

«1. Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում Լիազոր մարմինը՝

1) մշակում է պետական ռազմավարությունը և համակարգում դրանից բխող միջոցառումների իրականացումը.

2) մշակում է ընտանիքում և կենցաղային բռնությունից տուժած անձանց ուղղորդման կարգը.

3) իրականացնում է ընտանիքում և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով՝ ընդգրկելով ինչպես ոստիկանության, քննչական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի, այնպես էլ վերջիններիս չգրանցած աջակցության կենտրոնների և ապաստարանների տրամադրած

տվյալները, և դրանց ընթացքի վերաբերյալ վիճակագրության վարում, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում.

4) ուսումնասիրում է ընտանիքում և կենցաղային բռնության պատճառները, պայմանները և հետևանքները, մշակում դրանց հաղթահարմանն ուղղված պետական ծրագրեր.

5) իրականացնում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին սոցիալական ծառայություններ տրամադրող աջակցության կենտրոնների և ապաստարանների հավաստագրումը՝ Կառավարության սահմանած կարգով.

6) հիմնադրում է ապաստարաններ և աջակցության կենտրոններ, ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ կնքում ապաստարանի և աջակցության կենտրոնի ֆինանսավորման պայմանագիր՝ կառավարության սահմանած պայմանագրի օրինակելի ձևի հիման վրա և վերահսկողություն իրականացնում իր կողմից մասնակի կամ ամբողջապես ֆինանսավորվող ապաստարանների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ ֆինանսական միջոցների օգտագործման մասով.

7) վերահսկում է ապաստարանների կողմից Կառավարության սահմանած՝ ապաստարանին և դրա անձնակազմին ներկայացվող պահանջների պահպանումը.

8) պարբերաբար կազմակերպում է աջակցության կենտրոնների և ապաստարանների աշխատակիցների վերապատրաստում, այդ թվում՝ ոլորտի հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ.

9) հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ՝ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածների համար նախատեսված անվճար «Թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարները, որոնք աջակցության կենտրոնները և ապաստարանները պարտավոր են ունենալ), որոնցով ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են

անհապաղ կապ հաստատել աջակցության կենտրոնների և ապաստարանների աշխատակցի կամ կենտրոնների կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում՝ նաև նրանց համար մատչելի օգնություն.

10) ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին ժամանակավոր աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ բացում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամար և տնօրինում այն՝ կառավարության սահմանած կարգով: Հաշվեհամարի միջոցները ձևավորվում են պետական բյուջեի հատկացումներից, ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցներից.

11)ընտանիքում և կենցաղային բռնությունը կանխարգելելու նպատակով՝ աջակցման կենտրոն և ապաստարան դիմած անձանց շրջանում սահմանում է մշտադիտարկման իրականացման մեխանիզմները.

12) Լիազոր մարմնին ենթակա Միասնական սոցիալական ծառայությունը համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և ներպետական հասարակական կազմակերպությունների հետ՝ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց՝ ըստ անհրաժեշտության, սոցիալական ծառայություններից օգտվելու գործընթացում աջակցելու և համապատասխան մարմիններ ուղղորդելու համար:

~~1. Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում Լիազոր մարմինը՝~~

~~1) մշակում է պետական ռազմավարությունը և համակարգում դրանից բխող միջոցառումների իրականացումը.~~

~~2) իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով՝ ընդգրկելով ինչպես ոստիկանության, քննչական կոմիտեի, դատախազության և Հայաստանի~~

Հանրապետության դատական դեպարտամենտի, այնպես էլ վերջիններիս չգրանցած աջակցության կենտրոնների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, առողջապահության և կրթության բնագավառներում լիազոր հանրապետական գործադիր մարմինների տրամադրած տվյալները, և դրանց ընթացքի վերաբերյալ վիճակագրության վարում, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում.

3) ուսումնասիրում է ընտանիքում բռնության պատճառները, պայմանները և հետևանքները, մշակում դրանց հաղթահարմանն ուղղված ծրագրեր.

4) վերահսկում է ապաստարանների կողմից Կառավարության սահմանած՝ ապաստարանին և դրա անձնակազմին ներկայացվող պահանջների պահպանումը, ինչպես նաև իրականացնում է ոչ առևտրային իրավաբանական անձանց կողմից ընտանիքում բռնության ենթարկվածներին ապաստարանի միջոցով սոցիալական ծառայություններ տրամադրվելու հավաստագրում՝ Կառավարության սահմանած կարգով.

5) հիմնադրում է ապաստարաններ, ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ կնքում ապաստարանի ֆինանսավորման պայմանագիր կառավարության սահմանած պայմանագրի օրինակելի ձևի հիման վրա և վերահսկողություն իրականացնում իր կողմից մասնակի կամ ամբողջապես ֆինանսավորվող ապաստարանների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ ֆինանսական միջոցների օգտագործման մասով.

6) պարբերաբար կազմակերպում է աջակցության կենտրոնների և ապաստարանների աշխատակիցների վերապատրաստում, այդ թվում՝ ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ.

7) հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ՝ ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված անվճար «Թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարները, որոնք աջակցության կենտրոնները պարտավոր են ունենալ), որոնցով ընտանիքում

~~բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապվել աջակցության կենտրոնների աշխատողի կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում՝ նաև նրանց համար մատչելի օգնություն.~~

~~8) ընտանիքում բռնության ենթարկվածներին ժամանակավոր աջակցություն ցուցաբերելու նպատակով բացում է ընտանիքում բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամար և տնօրինում այն՝ կառավարության սահմանած կարգով: Հաշվեհամարի միջոցները ձևավորվում են պետական բյուջեի հատկացումներից, ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցներից.~~

~~9) հաստատում է աջակցության կենտրոնի կողմից ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցման կազմակերպման և իրականացման կարգը.~~

~~10) սահմանում է կանխարգելիչ հաշվառման շրջանակում չափահաս անձանց կողմից ընտանիքում բռնություն գործադրելը կանխարգելելու նպատակով մշտադիտարկման իրականացման կարգը.~~

~~11) հաստատում է ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիոն ծրագիրը:~~

2. Լիազոր մարմնի ղեկավարին կից գործում է ընտանիքում <u>և կենցաղային</u> բռնության կանխարգելման խորհուրդը, որը նրան առաջարկություններ է ներկայացնում ընտանիքում <u>և կենցաղային</u> բռնության կանխարգելման բնագավառում պետական ռազմավարության, դրանից բխող ծրագրերի, օրենսդրական բարեփոխումների, հանրության իրազեկման միջոցառումների և այլ հարցերի վերաբերյալ: Խորհրդի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական հիմունքներով: Խորհրդի կազմում ~~հավասար թվով~~ ընդգրկվում են՝

1) պետական կառավարման համակարգի մարմինների, հանրապետական գործադիր իշխանության, ոստիկանության, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, դատախազության ներկայացուցիչներ.

2) հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ.

3) աջակցության կենտրոնների և ապաստարանների ներկայացուցիչներ. Լիազոր մարմնի ղեկավարի ներկայացմամբ:

3. Խորհրդի կազմում ընդգրկվում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մեկ ներկայացուցիչ:

4. Խորհրդի գործառույթները, ձևավորման կարգը սահմանում է Կառավարությունը, իսկ անհատական կազմը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը:

***(14-րդ հոդ. փոփ. 24.03.21 ՀՕ-160-Ն օրենք)***

Հոդված 15. Ոստիկանության լիազորություններն ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում

1. Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանությունը Ներքին գործերի նախարարությունը՝

1) ապահովում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաստումը, որի կարգը սահմանում է ներքին գործերի նախարարը: Մասնագիտացված ստորաբաժանման հատուկ համազգեստը սահմանում է Կառավարությունը, իսկ վերապատրաստման կարգը և գործունեության այլ առանձնահատկությունները ոստիկանության պետը ներքին գործերի նախարարը.

2) սահմանում է կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը, ինչպես նաև անչափահաս անձանց նկատմամբ կանխարգելիչ հաշվառման շրջանակում նրանց

կողմից ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրելը կանխարգելելու նպատակով մշտադիտարկում իրականացնելու կարգը և այդ նպատակով ամսական մեկից ոչ պակաս առնվազն մեկ հանդիպում ունենում նրանց հաշվառված անձանց հետ.

3) իրենց նկատմամբ ընտանիքում և կենցաղային բռնություն կիրառված լինելու մասին հաղորդմամբ ոստիկանություն դիմած անձանց իրազեկում է սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված պաշտպանության միջոցների մասին, պարզաբանում է նրանց իրավունքները և հասանելի ծառայություններից օգտվելու հնարավորությունը, անհրաժեշտության դեպքում նրանց ուղղորդում է աջակցության կենտրոններ, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով որոշում է կայացնում ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ եղողգտնվող անձանց ապաստարանում տեղավորելու մասին.

4) կազմակերպում է իր համապատասխան ծառայողների՝ ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության վերաբերյալ պարբերական վերապատրաստումներ, ինչպես նաև ապահովում է այլ մարմինների և կազմակերպությունների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին իր համապատասխան ծառայողների մասնակցությունը.

5) կայացնում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված անհետաձգելի միջամտության որոշումներ, ինչպես նաև հսկողություն է իրականացնում անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ՝ ներքին գործերի նախարարի սահմանած կարգին համապատասխան, բացառությամբ էլեկտրոնային հսկողության միջոցների.

6) կիրառում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված և ներքին գործերի նախարարի կողմից սահմանված՝ անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները և կազմակերպում ոստիկանության իրավասու

ծառայողների պարտադիր վերապատրաստումները հիշյալ չափորոշիչների կիրառման առանձնահատկություններին ծանոթացնելու նպատակով.

7) Լիազոր մարմնին տրամադրում է ընտանիքում և կենցաղային բռնության դեպքերի վերաբերյալ իր վարած վիճակագրությունը.

Հոդված 16. Կրթության ոլորտի պետական կառավարման համակարգի լիազոր ~~հանրապետական գործադիր~~ մարմնի լիազորություններն ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման բնագավառում

1. Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման բնագավառում Կրթության ոլորտի պետական կառավարման համակարգի լիազոր ~~լիազոր հանրապետական գործադիր~~ մարմինը՝

1) ուսուցիչների և դաստիարակների հետ պարբերաբար անցկացնում է ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման բնագավառում նրանց դերի, ընտանիքում և կենցաղային բռնության դեպքերի մասին իրավասու մարմիններին հայտնելու կարգի վերաբերյալ վերապատրաստումներ.

2) ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման նպատակով վերանայում է կրթական ծրագրերը և բացառում ընտանիքում և կենցաղային բռնության խրախուսման դրսևորումները դասագրքերում և կրթական նյութերում, ինչպես նաև կրթական ծրագրերում ընդգրկում է նյութեր ընտանիքում և կենցաղային բռնության բնույթի, ընտանիքի և հանրության վրա դրա ազդեցության և ավանդական ընտանիքում և կենցաղային արժեքների մասին:

Հոդված 17. Առողջապահության ոլորտի պետական կառավարման համակարգի լիազոր ~~հանրապետական գործադիր~~ մարմնի լիազորություններն ~~ընտանիքում բռնության կանխարգելման~~ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում

1. Ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում առողջապահության ոլորտի պետական կառավարման համակարգի լիազոր մարմինը՝

1) ապահովում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց համար անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում՝ բռնության դեպքով պայմանավորված անձի առողջական խնդիրների լուծման նպատակով.

2) բժշկական հաստատություններում պարբերական վերապատրաստումներ է իրականացնում ընտանիքում և կենցաղային բռնության արդյունքում բժշկական օգնության դիմած անձանց հասանելի հոգեբանական և այլ ծառայությունների մասին տեղեկացնելու, նրանց աջակցության կենտրոններ ուղղորդելու վերաբերյալ:

~~1. Ընտանիքում բռնության կանխարգելման բնագավառում առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը՝~~

~~1) ապահովում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար անհատույց առաջնային բժշկական օգնություն, սահմանում է ընտանիքում բռնության արդյունքում բժշկական օգնության դիմած անձանց վերաբերյալ տեղեկության գրանցման կարգը և ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ոստիկանությանը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին կամ դատախազությանը հայտնելու պայմանները.~~

~~2) իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի մասին ոստիկանությանը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին կամ դատախազությանը հայտնելու պայմանների և կարգի վերաբերյալ բժշկական հաստատությունների աշխատակիցներին իրազեկելու միջոցառումներ.~~

~~3) բժշկական հաստատություններում պարբերական վերապատրաստումներ է իրականացնում ընտանիքում բռնության արդյունքում բժշկական օգնության դիմած անձանց հասանելի հոգեբանական և այլ ծառայությունների մասին տեղեկացնելու, նրանց աջակցության կենտրոններ ուղղորդելու վերաբերյալ:~~

Հոդված 18. Խնամակալության և հոգաբարձության մարմինների լիազորություններն ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում

1. Ընտանքիում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության նպատակով խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում՝

1) օրենքով նախատեսված դեպքերում դիմում են դատարան՝ պաշտպանական որոշման համար, ինչպես նաև հաղորդում են ներկայացնում իրավապահ մարմիններ՝ անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց նկատմամբ գործադրվող՝ ընտանիքում և կենցաղային բռնության կամ դրա իրական սպառնալիքի մասին.

2) օրենքով և իրենց կանոնադրությամբ սահմանված կարգով կազմակերպում են ընտանիքում և կենցաղային բռնության պատճառով առանց խնամքի մնացած երեխաների և անգործունակ անձանց խնամքը:

Հոդված 19. Աջակցության կենտրոնը

1. Աջակցության կենտրոնը՝

1) աջակցության կենտրոն դիմած անձանց նրանց համար հասկանալի լեզվով, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում նրանց համար մատչելի եղանակով տեղեկացնում է նրանց իրավունքների, հասանելի ծառայությունների և օրենքով նախատեսված պաշտպանության միջոցների և դրանցից օգտվելու կարգի մասին.

2) կազմակերպում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին անհրաժեշտ և անհատույց հոգեբանական և իրավաբանական օգնության և այլ անհրաժեշտ սոցիալական ծառայությունների տրամադրումը.

3) սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով որոշում է կայացնում ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ ~~եղող~~ գտնվող անձանց ապաստարանում տեղավորելու մասին՝ նրանց համաձայնությամբ.

4) ուսումնասիրում է ընտանիքում և կենցաղային բռնության պատճառներն ու պայմանները, վարում ընտանիքում և կենցաղային բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրություն և արդյունքները ներկայացնում Լիազոր մարմին.

~~5) Լիազոր մարմնի սահմանած կարգի համաձայն՝ կազմակերպում է ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիան, այդ թվում՝ նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների պատճենները ստանալուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում ընտանիքում բռնություն գործադրած անձին առաջարկում է ստանալ ռեաբիլիտացիոն ծրագրի մաս կազմող համապատասխան աջակցություն և մասնակցել որոշակի միջոցառումների.~~

~~6) նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների պատճենները ստանալուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում ընտանիքում բռնության ենթարկվածին առաջարկում է հոգեբանական աջակցության տրամադրում.~~

~~6) նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների պատճենները ստանալուց հետո ողջամիտ ժամկետում ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածին առաջարկում է սույն օրենքով նախատեսված աջակցությունների տրամադրում.~~

~~7) սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված պայմաններով և Լիազոր մարմնի ղեկավարի հաստատած կարգով իրականացնում է հաշտեցում կամ~~

~~կազմակերպում է դրա իրականացումն ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև.~~

8) ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին աջակցում է աշխատանքի տեղավորման և պետությունից կամ համապատասխան կազմակերպություններից սոցիալական աջակցություն ստանալու հարցերում.

9) աջակցության կենտրոն դիմած անձի համաձայնությամբ նրա անվտանգությունն ապահովելու նպատակով դիմում է ոստիկանության համապատասխան ստորաբաժանում՝ նախազգուշացման կամ անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու հիմքերի առկայությունն ստուգելու համար, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված դեպքում դիմում է դատարան՝ պաշտպանական որոշում կայացնելու դիմումով.

10) ներկայացնում է ընտանիքում բռնության և կենցաղային կանխարգելմանը վերաբերող քաղաքականության և ընտանիքում և կենցաղային բռնությունից տուժած անձանց մատուցվող ծառայությունների բարելավմանն ուղղված առաջարկներ:

Հոդված 20. Ապաստարանը

1. Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապաստարանների առկայությունը և գործունեությունն ապահովելու ուղղությամբ: Ապաստարանը հիմնադրվում է Լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի հիմնած ոչ առևտրային կազմակերպության կամ այլ ոչ առևտրային իրավաբանական անձանց կողմից:

2. Լիազոր մարմինը ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ կարող է կնքել նրանց կողմից ապաստարան հիմնադրելու կամ արդեն հիմնադրված ապաստարանի գործունեության աջակցության մասին պայմանագիր, որը պետք է պարունակի նաև այդ ապաստարանի գործունեության նկատմամբ Լիազոր մարմնի՝ հսկողություն իրականացնելու կարգը, այդ թվում՝ տրամադրված ֆինանսական

միջոցների օգտագործման նկատմամբ: ~~Նոր ապաստարանի հիմնադրման վայրը որոշում է սույն օրենքով Լիազոր մարմինը՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից տրամադրվող կարիքների գնահատման եզրակացությունների հիման վրա:~~ Ֆինանսավորվող ոչ առևտրային իրավաբանական անձն ընտրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվող մրցույթով:

3. Ապաստարան հիմնադրելու համար համապատասխան կազմակերպությունները պետք է ստանան Լիազոր մարմնի կողմից տրամադրվող հավաստագրում, որի տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը: Կառավարությունը կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցություն տրամադրել ոչ առևտրային իրավաբանական անձանց՝ ապաստարան ստեղծելու և դրա գործունեությունն ապահովելու համար:

4. Ապաստարանը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմաններով և համապատասխան անվտանգության համակարգով, երեխաների համար՝ նաև խնամքի և կրթության պայմաններով, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմաններով և համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ չափանիշներին:

5. Ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներն իրենց դիմումի դեպքում իրենց խնամքի տակ ~~եղող~~գտնվող անձանց հետ (այսուհետ՝ շահառուներ) կարող են ապաստարանում տեղավորվել, եթե առկա է բռնության կրկնման կամ շարունակման վտանգի վերաբերյալ հիմնավոր ենթադրություն: Ապաստարանում չեն կարող տեղավորվել երեխաներ՝ առանց առնվազն մեկ ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի: Անձին ապաստարանում տեղավորելու վերաբերյալ որոշում կարող են կայացնել՝

1) ոստիկանությունը՝ կյանքին և առողջությանն սպառնացող վտանգի դեպքում.

2) աջակցության կենտրոնը՝ գնահատված կարիքի հիման վրա ստանալով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի եզրակացությունը:

Հոդված 21. Ընտանիքում և կենցաղային բռնությունը կանխարգելող հատուկ կառույցների ֆինանսավորման աղբյուրները

1. Աջակցության կենտրոնների և ապաստարանների ֆինանսավորումն իրականացվում է դրանց հիմնադիրների միջոցների, սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին:

ԳԼՈՒԽ 4

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԸ ԵՎ ԴՐԱ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

**Հոդված 22. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը**

1. Իրավասու մարմինների կողմից ընտանիքում և կենցաղային բռնության դեպքերի և (կամ) ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին կամ ենթադրաբար ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին առնչվող հանցագործության դեպքերի վերաբերյալ ստացված մասնավոր կյանքի տվյալները գաղտնի են: Արգելվում է առանց ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի կամ ենթադրաբար ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի համաձայնության զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ եղանակով նրանց վերաբերյալ այնպիսի տեղեկության հրապարակումը, որը թույլ

կտա բացահայտել նրանց ինքնությունը, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. Ոստիկանության իրավասու ծառայողներին, աջակցության կենտրոնի և ապաստարանի աշխատակիցներին արգելվում է հրապարակել ապաստարանում տեղավորված՝ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածների և նրանց խնամքի տակ երրորդ գտնվող անձանց գտնվելու վայրը կամ այլ տեղեկություն, որի միջոցով հնարավոր է հայտնաբերել նրանց գտնվելու վայրը:

3. Մասնավոր կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն, իսկ դրա հետևանքով անձին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքով սահմանված կարգով:

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 71-րդ հոդվածի՝ 1-ին մասի

1. 6-րդ կետի «կրոնով,» բառից հետո լրացնել «սեռով,» բառը,
2. 10-րդ կետի «կամ մերձավորի» բառերից հետո լրացնել «,զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ» բառերը:

***Հոդված 2.*** Օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1. 9-րդ կետի «մերձավոր ազգականի» բառերից հետո լրացնել «, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ» բառերը,
2. 15-րդ կետի «կրոնով,» բառից հետո լրացնել «սեռով,» բառը:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ մասի 4-րդ կետերի «մերձավոր ազգականի» բառերից հետո լրացնել «, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ» բառերը:

***Հոդված 4.*** Օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) անչափահասի նկատմամբ,

3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

4) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,

5) շահադիտական դրդումներով,

6) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ,

7) մերձավոր ազգականի,զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:»:

***Հոդված 5.*** Օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

3) անչափահասի նկատմամբ,

4) շահադիտական դրդումներով,

5) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ,

6) մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:»:

***Հոդված 6.*** Օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1. 7-րդ կետի «մերձավոր ազգականի» բառերից հետո լրացնել « , զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ» բառերը:
2. 13-րդ կետի «կրոնով» բառից հետո լրացնել «սեռով,» բառը:

***Հոդված 7.*** Օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1. 9-րդ կետի «մերձավոր ազգականի» բառերից հետո լրացնել «, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ» բառերը:
2. 15-րդ կետի «կրոնով» բառից հետո լրացնել «սեռով,» բառը:

***Հոդված 8.*** Օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի «մերձավոր ազգականի» բառերից հետո լրացնել «, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ» բառերը:

***Հոդված 9.*** Օրենսգրքի 188-րդ հոդվածի՝ 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

4) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

5) այլ պետություն տեղափոխելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով:»:

***Հոդված 10.*** Օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի «մերձավոր ազգականի,» բառերից հետո լրացնել «, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,» բառերը:

***Հոդված 11.*** Օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասի

1. 6-րդ կետի «մերձավոր ազգականի» բառերից հետո լրացնել « , զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ» բառերը,
2. 10-րդ կետի «կրոնով,» բառից հետո լրացնել «սեռով,» բառը:

***Հոդված 12.*** Օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասի

3. 4-րդ կետի «մերձավոր ազգականի» բառերից հետո լրացնել « , զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ» բառերը:

4. 8-րդ կետի «կրոնով,» բառից հետո լրացնել «սեռով,» բառը:

*Հոդված 13.* Օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի

1. 6-րդ կետի «մերձավոր ազգականի» բառերից հետո լրացնել « , զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ» բառերը,
2. 10-րդ կետի «կրոնով,» բառից հետո լրացնել «սեռով,» բառը:

*Հոդված 14.* Օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անչափահասի նկատմամբ,

4) առանձին դաժանությամբ,

5) մի խումբ անձանց կողմից,

6) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,

7) առևանգված կամ որպես պատանդ վերցված անձի նկատմամբ,

8) մերձավոր ազգականի,զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից կամ

9) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:»:

**Հոդված 15.** Օրենսգրքի 196-րդ հոդվածից հետո լրացնել նոր 196.1-ին հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 196.1 Հետամտումը

1. Հետամտելը՝ անձին հետևելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով, նրա բնակության, աշխատանքի կամ ուսման, զբաղմունքի վայր այցելելու միջոցով կամ այլ եղանակով անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը, անձնական իրերի վրա հետքեր թողնելը, անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելը, եթե այդ արարքը կատարվել է պարբերաբար և անձի մեջ վախ կամ անհանգստություն է առաջացրել իր կամ իր մերձավորի անվտանգության համար և ստիպել է էապես փոխել իր կենսակերպը կամ այն փոխելու իրական անհրաժեշտություն է առաջացրել

պատժվում է՝ հանրային աշխատանքներով՝ երկու հարյուրից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անչափահասի նկատմամբ կամ

4) մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

***Հոդված 16.*** Օրենսգրքի 200-րդ հոդվածի 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

***Հոդված 17.*** Օրենսգրքի 204-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

2) տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով,

3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

4) անչափահասի նկատմամբ,

5) մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից՝ պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

***Հոդված 18.*** Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և 2-րդ մասի 1-ին կետի «կամ մերձավորի» բառերից հետո լրացնել «, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ» բառերը:

***Հոդված 19.*** Օրենսգրքի 260-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի «կամ մերձավորի» բառերից հետո լրացնել «զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ» բառերը,
2. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

2) կատարվել է ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,

3) կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,

4) կատարվել է մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

5) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

6) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

7) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:»:

***Հոդված 20.*** Օրենսգրքի 508-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերից որևէ մեկով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերից որևէ մեկով նախատեսված պահանջն ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից չկատարելը՝ պատժվում է հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝

առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով::»:

**Հոդված 21.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 71. Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանքները

1. Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանքներ են՝

1) հանցանքը դատվածություն ունեցող անձի կողմից կատարելը,

2) հանցանքը խմբի կամ հանցավոր կազմակերպության կազմում կատարելը,

3) հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը,

4) հանցանքը կատարելուն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կամ ոչ սթափ (հարբած) վիճակում գտնվող կամ քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքի չհասած անձին ներգրավելը, եթե հանցավորը գիտակցում է, որ անձը հոգեկան առողջության խնդիրներ ունի, ոչ սթափ (հարբած) վիճակում է կամ չի հասել քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքի,

5) դիտավորյալ հանցանքն անչափահասի նկատմամբ, նրա հետ համատեղ կամ հանցավորի արարքի բնույթը գիտակցող անչափահասի ներկայությամբ կատարելը, եթե հանցավորը գիտակցում է, որ անձն անչափահաս է,

6) հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը,

7) հանցանքն այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթով կատարելը,

8) հանցանքն այլ հանցագործությունը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարելը,

9) հանցանքը հղի կնոջ, անօգնական, խոցելի կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը, եթե հանցավորը գիտակցում է, որ կինը հղի է, կամ անձը անօգնական, խոցելի կամ իրենից կախյալ վիճակում է,

10) հանցանքն անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի~~, կամ~~ <u>զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ</u> նկատմամբ կատարելը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ հասարակական պարտքը կատարելու հետ,

11) հանցանքն առանձին դաժանությամբ, անձին ծաղրուծանակի, տանջանքի կամ տառապանքի ենթարկելով կատարելը,

12) հանցանքն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելը,

13) հանցանքը հանրության համար վտանգավոր եղանակով կատարելը,

14) հանցանքը զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքերի կամ ռադիոակտիվ նյութերի գործադրմամբ կամ դրանց գործադրման սպառնալիքով կատարելը,

15) հանցանքը թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի կամ ուժեղ ներգործող դեղերի գործադրմամբ կատարելը,

16) հանցանքն ալկոհոլի, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի կամ ուժեղ ներգործող դեղերի ազդեցությամբ կատարելը, եթե հանցավորն ինքն է իրեն դրել այդ վիճակի մեջ,

17) հանցանքը ռազմական կամ արտակարգ դրության, արտակարգ իրավիճակի կամ զանգվածային անկարգությունների պայմաններն օգտագործելով կատարելը:

2. Պատիժ նշանակելիս դատարանը որպես ծանրացնող հանգամանք չի կարող հաշվի առնել սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված այլ հանգամանքներ:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասում նշված որևէ հանգամանք սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանք:

4. Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում սույն օրենսգրքի 76-րդ հոդվածով սահմանված կանոններով պատիժ նշանակելիս սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ծանրացնող հանգամանքը հաշվի չի առնվում որպես ծանրացնող հանգամանք:

Հոդված 155. Սպանությունը

1. Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

2. Սպանությունը՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ,

3) անօգնական վիճակում գտնվողի,

4) ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի,

5) անչափահասի,

6) առանձին դաժանությամբ,

7) այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով,

8) մի խումբ անձանց կողմից,

9) մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

10) շահադիտական դրդումներով,

11) պատվերով,

12) խուլիգանական դրդումներով,

13) այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով,

14) ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի կամ զանգվածային անկարգությունների պայմաններն օգտագործելով,

15) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով, կամ

16) հանցագործությունից տուժած անձի բջիջը, հյուսվածքը, օրգանը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելու նպատակով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասնչորսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ։

Հոդված 162. Ինքնասպանության հասցնելը

1. Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով։

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) անչափահասի նկատմամբ,

3) մերձավոր ազգականի~~, կամ~~ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

4) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,

5) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ կամ

6) ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի կամ զինծառայողի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

3. Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) անչափահասի նկատմամբ,

3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

4) մերձավոր ազգականի~~, կամ~~ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

5) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,

6) շահադիտական դրդումներով,

7) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ կամ

8) ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի կամ զինծառայողի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 163. Ինքնասպանության հակելը

1. Հորդորելու, համոզելու կամ խաբեության միջոցով անձի մեջ ինքնասպանություն գործելու վճռականություն հարուցելը, եթե անձն ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ է կատարել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) անչափահասի նկատմամբ,

3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

4) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,

5) շահադիտական դրդումներով, ~~կամ~~

6) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ,

7) մերձավոր ազգականի, ~~կամ~~ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 164. Ինքնասպանությանը նպաստելը

1. Ինքնասպանություն գործելու վճռականություն ունեցող անձին դա իրագործելու համար գործիք կամ միջոց տրամադրելը կամ դրան այլ կերպ նպաստելը, եթե անձը ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ է կատարել, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 161-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

3) անչափահասի նկատմամբ,

4) շահադիտական դրդումներով, ~~կամ~~

5) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ, ~~կամ~~

6) մերձավոր ազգականի ~~կամ~~, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Հոդված 166. Առողջությանը ծանր վնաս պատճառելը

1. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելը, որը՝

1) վտանգավոր է կյանքի համար,

2) առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ դրա գործառույթի կորուստ,

3) արտահայտվել է դեմքի, գլխի, ականջի կամ կզակի անջնջելի այլանդակմամբ,

4) առաջացրել է առողջության քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով,

5) առաջացրել է հղիության ընդհատում կամ

6) առաջացրել է հոգեկան խանգարում, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) անչափահասի նկատմամբ,

3) առանձին դաժանությամբ,

4) այլ անձանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր եղանակով,

5) մի խումբ անձանց կողմից,

6) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

7) մերձավոր ազգականի ~~կամ,~~ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

8) շահադիտական դրդումներով,

9) պատվերով,

10) խուլիգանական դրդումներով,

11) այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով,

12) ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի կամ զանգվածային անկարգությունների պայմաններն օգտագործելով,

13) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով,

14) հանցագործությունից տուժած անձի բջիջը, հյուսվածքը, օրգանը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելու նպատակով կամ

15) անզգուշությամբ առաջացնելով հանցագործությունից տուժած անձի մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 167. Առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը

1. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որևէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար և չի առաջացրել սույն օրենսգրքի 166-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, բայց առաջացրել է՝

1) առողջության տևական քայքայում կամ

2) ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

4) անչափահասի նկատմամբ,

5) առանձին դաժանությամբ,

6) այլ անձանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր եղանակով,

7) մի խումբ անձանց կողմից,

8) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

9) մերձավոր ազգականի~~, կամ~~ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

10) շահադիտական դրդումներով,

11) պատվերով,

12) խուլիգանական դրդումներով,

13) այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով,

14) ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի կամ զանգվածային անկարգությունների պայմաններն օգտագործելով,

15) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով, կամ

16) հանցագործությունից տուժած անձի բջիջը, հյուսվածքը, օրգանը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելու նպատակով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Հոդված 171. Առողջությանը թեթև վնաս պատճառելը

1. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, որն առաջացրել է՝

1) առողջության կարճատև քայքայում կամ

2) ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

4) անչափահասի նկատմամբ,

5) մի խումբ անձանց կողմից,

6) մերձավոր ազգականի~~, կամ~~ <u>զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ</u> կողմից կամ

7) խուլիգանական դրդումներով՝

պատժվում է հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, անհրաժեշտ պաշտպանության կամ հակաիրավական ունձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ մեկ ուրիշի առողջությանը թեթև վնաս պատճառելը հանցագործություն չի համարվում:

Հոդված 188. Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը

1. Մարդու թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ բռնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցությունը կամ հանցագործությունից տուժած անձի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ խոստանալու կամ առաջարկելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալու կամ առաջարկն ընդունելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) մերձավոր ազգականի~~,~~ ~~կամ~~ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,,

3~~2~~) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

~~3~~4) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

45) այլ պետություն տեղափոխելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ առողջությանը ծանր վնաս կամ հանգեցրել է հանցագործությունից տուժած անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանության կամ առաջացրել է այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնչորս տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի, ինչպես նաև սույն օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածների իմաստով՝ շահագործում են համարվում այլ մարդու՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայություն մատուցելուն կամ հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը,- ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելը:

5. Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններից տուժած անձն ազատվում է իր կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցանքների համար քրեական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ հանցանքները կատարել է հարկադրանքի ներքո:

Հոդված 189. Երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը

1. Երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով երեխային կամ անօգնական վիճակում գտնվողին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձին շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

4) մերձավոր ազգականի~~, կամ~~ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

5) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

6) այլ պետություն տեղափոխելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասներեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ առողջությանը ծանր վնաս կամ հանգեցրել է հանցագործությունից տուժած անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանության կամ առաջացրել է այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից տասնհինգ տարի ժամկետով:

Հոդված 192. Ազատությունից ապօրինի զրկելը

1. Մարդուն ազատությունից ապօրինի զրկելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 191-րդ կամ 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

4) անչափահասի նկատմամբ,

5) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

6) մերձավոր ազգականի, ~~կամ~~ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

7) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

8) շահադիտական դրդումներով,

9) ազատությունից ապօրինի զրկված անձին ազատ արձակելու պայմանով պահանջ ներկայացնելով կամ

10) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 194. Հոգեկան ներգործությունը

1. Սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, ինչպես նաև սոցիալական մեկուսացումը կամ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անչափահասի նկատմամբ,

4) մերձավոր ազգականի, կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

5) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,

6) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

7) խուլիգանական դրդումներով կամ

8) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Հոդված 195. Ֆիզիկական ներգործությունը

1. Հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը, եթե չեն առաջացել սույն օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված հետևանքները՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ

ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անչափահասի նկատմամբ,

4) առանձին դաժանությամբ,

5) մի խումբ անձանց կողմից,

6) մերձավոր ազգականի, կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

7) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,

8) շահադիտական դրդումներով,

9) խուլիգանական դրդումներով կամ

10) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով՝

պատժվում է հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Հոդված 196. Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը

1. Անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 166-րդ կամ 167-րդ հոդվածով

նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անչափահասի նկատմամբ,

4) առանձին դաժանությամբ,

5) մի խումբ անձանց կողմից,

6) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,

7) առևանգված կամ որպես պատանդ վերցված անձի նկատմամբ,

8) մերձավոր ազգականի, ~~կամ~~ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից կամ

~~8~~9) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

Հոդված 196.1

Հետամտումը 1. Հետամտելը՝ անձին հետևելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով, նրա բնակության, աշխատանքի կամ ուսման, զբաղմունքի վայր այցելելու միջոցով կամ այլ եղանակով անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը, անձնական իրերի վրա հետքեր թողնելը, անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելը, եթե այդ արարքը կատարվել է պարբերաբար և անձի մեջ վախ

կամ անհանգստություն է առաջացրել իր կամ իր մերձավորի անվտանգության համար և ստիպել է էապես փոխել իր կենսակերպը կամ այն փոխելու իրական անհրաժեշտություն է առաջացրել պատժվում է՝ հանրային աշխատանքներով՝ երկու հարյուրից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անչափահասի նկատմամբ կամ

4) մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 200. Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ

1. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են 18 տարին լրացած անձի կողմից 16 տարին չլրացած անձի նկատմամբ, եթե բացակայում են սույն օրենսգրքի 189-րդ, 198-րդ կամ 199-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) 12-ից 14 տարին չլրացած անձի նկատմամբ,

2) մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

3) մի խումբ անձանց կողմից կամ

4) առանձին դաժանությամբ՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է վերընթաց ազգականի կամ այն անձի կողմից, որի վրա դրված է երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն կամ

2) անզգուշությամբ առաջացրել է առողջությանը ծանր վնասի պատճառում կամ հոգեկան խանգարում կամ հանգեցրել է հանցագործությունից տուժած անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանության կամ առաջացրել է այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

~~4. Սույն հոդվածով նախատեսված սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, միևնույն անձի կողմից միևնույն անձի նկատմամբ մեկից ավելի անգամ կատարելը որակվում է որպես մեկ հանցագործություն:~~

Հոդված 204. Անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը

1. Մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկությունն առանց նրա համաձայնության օգտագործելը, իրացնելը կամ հայտնելը կամ այդ տեղեկությունն օրենքով սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու նպատակով ձեռք բերելը կամ պահելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունը հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով տարածելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

2) տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով,

3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

4) անչափահասի նկատմամբ,

5) մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ ազատության

սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 258. Շորթումը

1. Շորթումը՝ անձի կամ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին հանձնելու կամ հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու, վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով,

3) շանտաժով կամ

4) հարկադրանքի այլ եղանակով՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

2. Շորթումը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելով,

2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

3) ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,

4) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,

5) անչափահասի նկատմամբ,

6) արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի նկատմամբ,

7) ժամկետային զինծառայողի նկատմամբ,

8) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

9) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

10) խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Շորթումը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելով կամ

3) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

Հոդված 260. Գույքային վնաս պատճառելը սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով

1. Անձին գործարք կնքելուն կամ գործարք կնքելուց հրաժարվելուն, պարտավորություն ստանձնելուն կամ այլ արարքի կատարմանը հարկադրելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել, եթե բացակայում են շորթման կամ հափշտակության հատկանիշները, և որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով,

3) շանտաժով կամ

4) հարկադրանքի այլ եղանակով՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

2) կատարվել է ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,

3) կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,

4) կատարվել է մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

54) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

56) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

67) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

Հոդված 508. Անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելը

1. «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերերից որևէ մեկովով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերից որևէ մեկովով նախատեսված պահանջն ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից չկատարելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

**Նախագիծ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 202-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում, 234.1-ին հոդվածում, 234.2 հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերի և 3-րդ մասի, 234.4. հոդվածի 2-րդ մասի և 4-6-րդ մասերի «ընտանիքում» բառերից հետո ավելացնել «և կենցաղային» բառով:

**Հոդված 2.** Օրենսգրքի 234.2. հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «տեղեկություններ» և 5-րդ կետի «պատասխանողի՝» բառերից առաջ լրացնել «առկայության դեպքում» բառերը:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 234.3. հոդվածի 3-րդ մասի «տասնօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

***Հոդված 4.*** Օրենսգրքի 234.4. հոդվածում՝

1. 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Պաշտպանական որոշումն ուղարկվում է ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց, իսկ եթե հայցադիմումը ներկայացրել է ոչ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձը, ապա նաև այն ներկայացրած անձին: Դատական ակտի պատճենները տրամադրվում են ոստիկանությանը և «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և

ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված լիազոր մարմնին և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը՝ որոշման կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով: Եթե դատական ակտն առնչվում է անչափահաս կամ անգործունակ անձի շահերին, ապա այն ուղարկվում է նաև խնամակալության և հոգաբարձության մարմին:

2. 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Տեղեկանք**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ» ՕՐԵՆՍԳՐՔԻ**

**փոփոխվող հոդվածների վերաբերյալ**

**Հոդված 202. Հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գործերը**

1. Դատարանը հատուկ հայցային վարույթի կարգով քննում է հետևյալ գործերը.

1) ընտանեկան գործերը.

2) Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերը.

3) առանձին աշխատանքային վեճերով գործերը.

4) կորպորատիվ վեճերով գործերը.

5) խմբային հայցի հիման վրա քննվող գործերը.

6) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և անվճարունակ բանկի, վարկային կազմակերպության, ներդրումային ընկերության, ներդրումային ֆոնդի կառավարչի և ապահովագրական ընկերության ժամանակավոր ադմինիստրացիայի որոշումների բողոքարկումը.

7) «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ գործերը.

8) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գնումների հետ կապված վեճերը:

**234.1 Հայցադիմումի ներկայացնելը**

1. «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցադիմումը ներկայացվում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի բնակության վայրի կամ վերջինիս համաձայնությամբ հայցադիմում ներկայացնող աջակցության կենտրոնի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

## Հոդված 234.2. Հայցադիմումին ներկայացվող պահանջները

1. Պաշտպանական որոշման կայացման վերաբերյալ հայցադիմումի նկատմամբ տարածվում են հայցադիմումի համար սույն օրենսգրքով սահմանված պահանջներն այնքանով, որքանով կիրառելի են սույն գլխով նախատեսված վարույթի նկատմամբ:

2. Հայցադիմումը ներառում է նաև՝

1) «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի վերաբերելի դրույթները.

2) առկայության դեպքում տեղեկություններ պատասխանողի և ենթադրաբար ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձի միջև ընտանիքում և (կամ) արյունակցական կապերի մասին.

3) ընտանքիում բռնության անմիջականորեն սպառնացող վտանգի առկայությունը հիմնավորող տեղեկություններ.

4) «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված կոնկրետ սահմանափակումների կիրառման մասին նշում.

5) առկայության դեպքում պատասխանողի՝ «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքին համապատասխան՝ կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու հանգամանքը:

3. Առկայության դեպքում հայցադիմումին կցվում են «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքին համապատասխան՝ պատասխանողի նկատմամբ ընդունված՝ նախազգուշացման մասին և (կամ) անհետաձգելի միջամտության որոշումները:

4. Հայցադիմումն աջակցության կենտրոնի կողմից ներկայացվելու դեպքում հայցադիմումին կցվում է բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի՝ աջակցության կենտրոնին տված գրավոր համաձայնությունը դատարան դիմելու համար:

**Հոդված 234.3. Հայցադիմումի քննությունը**

1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումն ստանալու օրվանից՝ եռօրյա ժամկետում:

3. Դատարանը պաշտպանական որոշման կիրառման մասին հայցադիմումը քննում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում առանց դատական նիստ հրավիրելու հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելու պահից՝ ~~տասնօրյա~~ եռօրյա ժամկետում:

4. Գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio"): Դատարանը կաշկանդված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծմանն անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

5. Հայցադիմումի քննության ընթացքում առերևույթ հանցակազմի հատկանիշներ հայտնաբերելիս դատարանը, առանց վարույթը կասեցնելու, դիմում է գլխավոր դատախազին՝ քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերի առկայությունն ստուգելու միջնորդությամբ:

**Հոդված 234.4. Դատական ակտը**

1. Հայցադիմումի քննության արդյունքով դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) հայցը բավարարելու և պաշտպանական որոշումը կայացնելու մասին.

2) հայցը մերժելու մասին.

3) հայցը մասնակի բավարարելու և հայցադիմումում նշված սահմանափակումներից մեկը կամ մի քանիսը կիրառելու մասին.

4) հայցը մասնակի բավարարելու և հայցադիմումում նշված սահմանափակումների փոխարեն այլ սահմանափակում (սահմանափակումներ) կիրառելու մասին:

2. Պաշտպանական որոշման մեջ նշվում է պաշտպանական որոշման կիրառման ժամկետը: Պաշտպանական որոշումը կարող է նախատեսել՝

1) ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածի կամ նրա խնամքի տակ եղող անձանց ապաստարան տեղափոխելու անհրաժեշտությունը.

2) ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածների բուժման ծախսերի իրականացում բռնություն գործադրած անձի կողմից:

3. Դատարանի կայացրած պաշտպանական որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Պաշտպանական որոշումն ուղարկվում է ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց, իսկ եթե հայցադիմումը ներկայացրել է ոչ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձը, ապա նաև այն ներկայացրած անձին: ~~Անհրաժեշտության դեպքում դ~~Դատական ակտի պատճենները տրամադրվում են ոստիկանությանը և «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված լիազոր մարմնին և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը որոշման կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով: Եթե դատական ակտն առնչվում է անչափահաս կամ անգործունակ անձի շահերին, ապա այն ուղարկվում է նաև խնամակալության և հոգաբարձության մարմին:

~~5. Պաշտպանական որոշումը դրանում նշված ժամկետից շուտ կարող է վերացվել դատարանի կողմից՝ ընտանիքում բռնություն գործադրած և~~

~~ընտանիքում բռնության ենթարկված անձանց՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով սահմանված կարգով կնքված հաշտության դեպքում: Ընտանիքում բռնության ենթարկված կամ բռնություն գործադրած անձը պաշտպանական որոշումը վերացնելու նպատակով դատարան է ներկայացնում դիմում և աջակցության կենտրոնի մասնակցությամբ կնքված հաշտության համաձայնությունը: Պաշտպանական որոշումը վերացնելու մասին որոշումը դատարանը կայացնում է առանց նիստ հրավիրելու:~~

6. Պաշտպանական որոշումը կարող է վերացվել նաև ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի դիմումով, եթե ապացուցվում է, որ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն:

Նախագիծ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

# ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրնսգրքի 206.16-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-8-րդ կետերով նախատեսված պահանջները ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից դիտավորությամբ չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկից չորս հարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Տեղեկանք**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

## Հոդված 206.16. ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՄ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՉԿԱՏԱՐԵԼԸ

1. «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-8-րդ կետերով նախատեսված պահանջները ընտանիքում և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից դիտավորությամբ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկից չորս հարյուրապատիկի ~~ութսունապատիկից հարյուրապատիկի~~ չափով:

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-139-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 222.11-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«1.«Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 222.11-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«2. «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումի պարագայում դատարանը սույն օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասում նշված որոշումներից մեկը կայացնում է հայցադիմումն ստանալուց հետո՝ 36 ժամվա ընթացքում»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 222.11-րդ հոդվածի 3-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«3.Անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վերաբերյալ գործերով ծանուցագիրը հայցվորին, պատասխանողին և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձին կամ նրա օրինական ներկայացուցչին ուղարկվում է

դատական նիստը նշանակվելուց հետո՝ անհապաղ: Հրապարակային ծանուցումը չի կարող օգտագործվել որպես ծանուցման եղանակ»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 222.11-րդ հոդվածի 4-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«4. «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումը դատարանը քննում և գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում»:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՏԵՂԵԿԱՆՔ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 222.11. Անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վերաբերյալ գործերը**

1. «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանքիում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները:

2. «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանքիում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող հայցադիմումի պարագայում դատարանը սույն օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասում նշված որոշումներից մեկը կայացնում է հայցադիմումն ստանալուց հետո՝ 36 ժամվա ընթացքում:

3. Անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վերաբերյալ գործերով ծանուցագիրը հայցվորին, պատասխանողին և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձին կամ նրա օրինական ներկայացուցչին ուղարկվում է դատական նիստը նշանակվելուց հետո՝ անհապաղ: Հրապարակային ծանուցումը չի կարող օգտագործվել որպես ծանուցման եղանակ:

4. «Ընտանքիում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանքիում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ անհետաձգելի միջամտության որոշումը վիճարկող

հայցադիմումը դատարանը քննում և գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում:

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«14) հայցվորները՝ «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցերով.»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## Հոդված 22. Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները

1. Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

1) հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով.

2) հայցվորները՝ ալիմենտի գանձման, ալիմենտի չափի ավելացման, ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով պարտք առաջանալիս մեղավոր անձին պատասխանատվության ենթարկելու, ալիմենտը ժամանակին չվճարելու համար տուգանք բռնագանձելու կամ ալիմենտային պարտավորությունների ուշացմամբ պատճառված վնասների հատուցման վերաբերյալ հայցերով.

3) հայցվորները՝ խեղման կամ առողջությանը պատճառված այլ վնասի, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

4) սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված թոշակի և նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հայցերով.

5) հայցվորները՝ քրեական վարույթի ընթացքում հատուցման ենթակա գույքային վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

6) հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող հայցադիմումների (դիմումների) գծով.

7) արդարացված մեղադրյալները՝

ա. անօրինական քրեական հետապնդում հարուցելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու, դատապարտելու, ինչպես նաև իրավունքների կամ ազատությունների անօրինական այլ սահմանափակումների հետևանքով իրեն պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով,

բ. նախկին աշխատանքում (նախկին պաշտոնում) վերականգնման, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համարժեք աշխատանք (պաշտոն) ստանալու կամ նախկին աշխատանքը (պաշտոնը) կորցնելու հետևանքով պատճառված վնասի դրամական փոխհատուցման հայցերով,

գ. անազատության մեջ պահելու ձևով պատիժը կրելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժների մեջ հաշվակցելու հայցերով,

դ. նախկինում զբաղեցրած բնակելի տարածքը հետ ստանալու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բնակմակերեսով և գտնվելու վայրով համարժեք բնակելի տարածք ստանալու հայցերով.

ե. գույքն առգրավելու, արգելադրելու, բռնագրավելու կամ այլ կերպ տնօրինելու հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով.

8) հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ խոշտանգման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով.

9) ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

ա. կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումների վերաբերյալ բողոքներով,

բ. մշակութային արժեքներն ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելիս.

10) բողոք բերող անձինք՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտը վերանայելու վերաբերյալ բողոքներով.

11) պետական մարմինները՝ սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքերում.

12) դիմողները՝ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումների համար.

13) դիմողները կամ հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 29.3-րդ և 31.3-րդ գլուխներով նախատեսված գործերով.

14) հայցվորները՝ «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցերով.

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Սոցիալական աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-231-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3) ընտանիքում բռնության ենթարկված անձանց՝ որպես «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված ապաստարան՝ մինչև 12 ամիս ժամկետով»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 12: Կացարանով ապահովելը**

1. Կացարանով ապահովելը սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձին (ընտանիքին) բնակելի տարածքով ապահովելու նպատակով սոցիալական ծառայության տրամադրումն է:

2. Կացարանը տրամադրվում է՝

1) օրենսդրությամբ սահմանված սոցիալական բնակարանային ֆոնդից՝ անհատույց կամ վարձակալական հիմունքներով՝

ա. բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված այն անձանց (ընտանիքներին), որոնք բնակվում են ժամանակավոր կացարանում, հասարակական նշանակության այլ օբյեկտներում, չունեն սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և չեն օտարել բնակարան (բնակելի տուն)՝ կացարանով ապահովելու համար հաշվառման վերցնելու և կացարան տրամադրելու ժամկետներին նախորդող հինգ տարիների ընթացքում,

բ. հրատապ արձագանք պահանջող՝ ռազմական կամ արտակարգ դրությամբ կամ արտակարգ իրավիճակով կամ անձի կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված այլ հանգամանքներով պայմանավորված իրավիճակներում հայտնված անձանց (ընտանիքներին).

2) որոշակի բնակության վայր չունեցող անձանց՝ որպես ժամանակավոր օթևան.

3) ընտանիքում բռնության ենթարկված անձանց՝ որպես «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված ապաստարան՝ մինչև 12 ամիս ժամկետով.

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հաշտարարության մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-351-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1) կողմերից որևէ մեկի նկատմամբ կայացվել է «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշում՝ անկախ այդ անձի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու կամ հաշվառումից հանված լինելու հանգամանքից.»:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«5) հաշտարարության կողմի՝ ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված լինելու վերաբերյալ ողջամիտ կասկած հարուցող նշանների առկայության դեպքում ընտանիքում ենթադրաբար բռնության ենթարկված կողմին տեղեկացնել «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված իրավունքների պաշտպանության եղանակների մասին:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 2. Հաշտարարությունը**

5. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված գործերով նախքան դատարան դիմելը կողմերը կարող են չդիմել պարտադիր հաշտարարության այն դեպքում, երբ՝

1) կողմերից որևէ մեկի նկատմամբ կայացվել է «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշում՝ անկախ այդ անձի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու կամ հաշվառումից հանված լինելու հանգամանքից.

2) կողմերից մեկը քրեական պատասխանատվության է ենթարկվել մյուս կողմի կամ նրա զավակի, ծնողի, պապի կամ տատի, եղբոր կամ քրոջ նկատմամբ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար.

3) կողմերից մեկը օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ, գտնվում է կալանքի տակ կամ կրում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:»:

**Հոդված 6. Հաշտարարի իրավունքները և պարտականությունները**

1. Հաշտարարն իրավունք ունի՝

1) հաշտարարության ընթացքում հանդիպումներ կազմակերպելու ինչպես հաշտարարության բոլոր կողմերի հետ միաժամանակ, այնպես էլ հաշտարարության յուրաքանչյուր կողմի հետ առանձին.

2) ազատորեն կիրառելու օրենքով չարգելված հաշտարարության մեթոդներ.

3) իր ծառայությունների դիմաց ստանալու վճար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

4) գովազդելու իր ծառայությունները:

5) դատարանի կողմից արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց նշանակված լինելու դեպքում ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ:

2. Հաշտարարը պարտավոր է՝

1) հաշտարարության կողմերին պարզաբանել իր դերը, հաշտարարության գործընթացի բնույթն ու էությունը, առավելությունները, հաշտարարության վարման կարգը, հաշտության համաձայնության և անհրաժեշտության դեպքում՝ նման համաձայնություն ձեռք չբերելու հետևանքները.

3) պահպանել հաշտարարության սկզբունքները և հաշտարարի վարքագծի կանոնները.

4) մասնակցել սույն օրենքով նախատեսված հաշտարարների վերապատրաստման դասընթացներին.

5) հաշտարարության կողմի՝ ընտանեկան բռնության ենթարկված լինելու վերաբերյալ ողջամիտ կասկած հարուցող նշանների առկայության դեպքում ընտանիքում ենթադրաբար բռնության ենթարկված կողմին տեղեկացնել «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված իրավունքների պաշտպանության եղանակների մասին:

3. Հաշտարարն ունի օրենքով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 41-րդ հոդվածի 5-րդ մասի 16-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«16) «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության և կենցաղային ենթարկված անձանց.»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 41. Հանրային պաշտպանությունը**

1. Հանրային պաշտպանություն է համարվում սույն հոդվածով նախատեսված դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը:

2. Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝

1) խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում.

2) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական վարույթներով, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

3. Սույն հոդվածի իմաստով ներկայացուցչությունը կամ պաշտպանությունն իրականացվում է քրեական վարույթներով նախաքննության ընթացքում, Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում:

4. Քրեական վարույթն իրականացնող մարմինը անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, կամ եթե դա է պահանջում արդարադատության շահը:

i

5. Հանրային պաշտպանի գրասենյակը, բացառությամբ քրեական վարույթի շրջանակներում ձերբակալված անձին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն տրամադրելու, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ մասում նշված

դեպքերի, սույն հոդվածով նախատեսված անվճար իրավաբանական օգնությունը տրամադրում է հետևյալ անձանց՝

1) օրենքով սահմանված կարգով հաստատված՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին.

2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին.

3) դատապարտյալներին.

4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին.

5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին.

6) գործազուրկներին.

7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին.

8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց.

9) փախստականներին.

10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներին.

11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով՝ անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որի ամսական եկամուտը չի գերազանցում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի կրկնապատիկը, որը չունի համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև, բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց.

12) հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց.

13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց.

14) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին.

15) խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով.

16) «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց.

17) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերով պատասխանողներին:

18) օտարերկրացիներին՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար.

19) անձանց, որոնց վերաբերյալ իրականացվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու գործերի վարույթ.

20) տուժողներին, եթե նրանք պարտադիր ժամկետային զինծառայող են կամ մինչև 16 տարեկան երեխա:

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Զենքի շրջանառության կարգավորման մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-368-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«4) «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով սահմանված դեպքերում.»:

**Հոդված 2.** Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«4) անչափահասների գործերով և ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման գործառույթ իրականացնող ոստիկանության ծառայողների՝ «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով սահմանված համապատասխան միջոցառումներ կատարելու նպատակով.»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 13. Զենք և ռազմամթերք առգրավելը, վերցնելը, ոչնչացնելը

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն առգրավում, վերցնում է իրավաբանական և ֆիզիկական անձանց տնօրինության տակ գտնվող զենքը հետևյալ դեպքերում՝

1) սույն օրենքով նախատեսված լիցենզիաների գործողությունը դադարեցվել է, թույլտվությունները ճանաչվել են ուժը կորցրած, կամ վերոնշյալ լիցենզիաները կամ թույլտվությունները բացակայում են.

2) իրավաբանական կամ ֆիզիկական անձինք խախտել են զենքի շրջանառության՝ սույն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պահանջները՝ մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով վերջնական որոշում ընդունելը.

3) զենք տնօրինողների մոտ հայտնաբերվել են ինքնաշեն կամ ձևափոխված, ձգաբանական կամ տեխնիկական բնութագրերի խախտումներով զենք կամ փամփուշտներ.

4) «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով սահմանված դեպքերում.

**Հոդված 31. Զենքի հաշվառումը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական շրջանառության մեջ գտնվող յուրաքանչյուր միավոր ակոսափող հրազենից կատարվում է նախնական ստուգողական կրակոց՝ ձգաբանական արդյունքները հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան ներկայացնելով, որի գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Իրավաբանական և ֆիզիկական անձինք զենք պահելու և օգտագործելու կամ պահելու և կրելու թույլտվության ժամկետը երկարաձգելու համար իրենց պատկանող ակոսափող զենքերը ստուգման նպատակով կրակելու համար ներկայացնում են փորձաքրեագիտական ստորաբաժանում՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության տված ուղեգրի համաձայն:

3. Ակոսափող զենքը վաճառելու, նվիրելու, ժառանգելու դեպքում ստուգման նպատակով կրակելու համար այն ներկայացվում է փորձաքրեագիտական ստորաբաժանում՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության տված ուղեգրի համաձայն:

4. Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող քաղաքացիական և ծառայողական բոլոր զենքերը ենթակա են հաշվառման Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում՝ քաղաքացիական և ծառայողական զենքերի հաշվառման միասնական էլեկտրոնային շտեմարանում և թղթային տարբերակով, որոնց կարգը սահմանում է Կառավարությունը:

5. Քաղաքացիական և ծառայողական զենքերի հաշվառման միասնական էլեկտրոնային շտեմարանում հաշվառվող տեղեկությունները անձնական տվյալներ են, որոնք մշակվում են առանց տվյալների սուբյեկտի համաձայնության՝ օրենքով սահմանված կարգով: Որպես սահմանափակ շրջանառության օբյեկտ՝ արգելվում է զենքի հաշվառման վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը այլ անձի կամ այլ մարմինների, բացառությամբ՝

1) «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերի.

2) քրեական հետապնդում իրականացնող մարմինների՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով.

3) համայնքային ոստիկանության՝ սույն օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով.

4) անչափահասների գործերով և ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման գործառույթ իրականացնող ոստիկանության ծառայողների՝ «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում

համերաշխության վերականգնման մասին» օրենքով սահմանված համապատասխան միջոցառումներ կատարելու նպատակով.

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

«Ընտանեկան բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և կից օրենքների նախագծերի վերաբերյալ

**1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ընտանեկան բռնության բոլոր դեպքերի բացահայտման և արդյունավետ կանխարգելման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ այդ թվում երեխաների լավագույն շահի արդյունավետ պաշտպանության ապահովման և համարժեք աջակցության միջոցներ տրամադրելու անհրաժեշտությամբ:

2017 թվականին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը, որի կիրարկումը փաստում է, որ այս ոլորտում կարգավորումները բավարար չեն ընտանեկան բռնության կանխարգելման, բռնությունից տուժած անձանց արդյունավետ պաշտպանության համար:

Գործող օրենքի վերնագիրն ամբողջությամբ չի արտահայտում օրենքի կարգավորման դաշտը, մասնավորապես բռնության տեսակը, որը մատնանշում է վերնագրում կիրառվում է ոչ միայն ընտանիքում, այլ նաև նախկին ամուսինների միջև և զուգընկերային հարաբերություններում: Բացի այդ, **«domestic violence»** արտահայտությունը, որը հիմք է հանդիսացել օրենքի վերնագրի համար,

թարգմանվում է՝ նաև տնային բռնություն, կենցաղային բռնություն, կենցաղում բռնություն, ներկենցաղային բռնություն:

Գործող օրենքում սահմանումների հստակեցման և լրացման կարիք կա, մասնավորապես՝ բռնության և դրանց տեսակների սահմանումները, ինչպես նաև օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն անհրաժեշտ է համախատասխանեցնել 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքի սահմանումներին, ինչպես նաև ՄԱԿ-ի ուղեցույցներին և միջազգային չափանիշներին:

Ընտանեկան բռնության տարածված դրսևորումներից է նաև վերահսկող վարքագծի կիրառումը կամ հետամտումը, որը ՄԱԿ-ի կողմից ևս սահմանվում է որպես ընտանեկան բռնության տեսակ, իսկ Եվրոպայի խորհուրդն այն առաջարկում է քրեականացնել որպես կանանց դեմ բռնության դրսևորում: Սակայն այս հասկացությունը, որպես բռնության տեսակ և հանցակազմ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, ինչի հետևանքով բռնության տվյալ դրսևորումը որևէ իրավական հետևանք չի ենթադրում: Չկան նաև նախատեսված պաշտպանական անհրաժեշտ իրավական հիմքեր՝ վերը նշված բռնության տեսակից զոհերին պաշտպանելու համար:

Գործող կարգավորումներով օրենքը տարանջատում է համատեղ բնակվող ընտանիքի անդամներին, համատեղ չբնակվող անդամներից, ինչը պրակտիկայում խնդիրներ է առաջացնում անձի պաշտպանական միջոցների դիմելու և ստանալու համար: Նկատի ունենալով Հայաստանում ընտանեկան հարաբերությունների համակարգը, ակնհայտ է, որ համատեղ չբնակվելու հանգամանքը միշտ չէ, որ կանխարգելող բնույթ է կրում բռնության համար: Ուստի օրենքը պետք է տարածվի ընտանիքի անդամների վրա՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից, ինչպես նաև կարգավորումներ ունենա զուգընկերների և նախկին զուգընկերների համար:

«Զուգընկեր» հասկացությունն օրենքով սահմանված չէ և օրենքի գործողության շրջանակից դուրս է մնում հաճախ ընտանեկան բռնության սուբյեկտ հանդիսացող անձը: Ընդ որում, բռնությունը գործադրվում է զուգընկերոջ կողմից վերահսկողություն, ուժ, իշխանություն և ազդեցություն կիրառելու նպատակով, ինչը հնարավոր չէր լինի, եթե բռնության ենթարկված զուգընկեր հանդիսացող անձը՝ ելնելով հաստատված հարաբերությունների բնույթից (մտերիմ, սեռական) չունենար որոշակի կախվածություն բռնություն գործադրած անձից:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Աջակցության կենտրոնի կարգավիճակ ունի միայն պետական կազմակերպությունը, մինչդեռ ներկայումս հասարակական կազմակերպության կարգավիճակով գործում են աջակցության կենտրոններ, որոնք մրցութային կարգով դրամաշնորհ են ստանում պետությունից, քաջատեղյակ են ոլորտի առանձնահատկություններին, ունեն ընտանեկան բռնության դեպքերով աշխատելու կազմակերպչական, նյութական և մարդկային (մասնագիտական) ռեսուրսներ, բռնության ենթարկված անձանց տրամադրում են աջակցություն՝ ընդհուպ ապահովելով ժամանակավոր կացարանով: Սակայն, պետության հետ հարաբերություններում այդ կենտրոնները չեն օգտվում Օրենքով սահմանված երաշխիքներից, օրինակ, իրավասու չեն դիմելու դատարան՝ պաշտպանության միջոց հայցելու պահանջով: Հետևաբար, շահավետ և նպատակահարմար կլինի աջակցության կենտրոնի կարգավիճակ տրամադրել նաև ոչ առևտրային կազմակերպության համար: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ոլորտի հասարակական կազմակերպությունների աշխատակիցները անընդհատ վերապատրաստումներ են անցնում կապված ընտանեկան բռնության կանխարգելման, պաշտպանական արդյունավետ միջոցների կիրառման, օրենքում առկա բացերի, ոլորտի իրավասու մարմինների հետ ավելի արդյունավետ համագործակցության ապահովման

ուղղություններով և առավել պատրաստված են աշխատելու ընտանեկան բռնութան ենթարկված անձանց հետ:

Օրենքը որպես բռնության ենթարկված անձ չի դիտարկում երեխային, ով անմիջականորեն ականատես է եղել բռնության կիրառմանը և/կամ կրել է այդ բռնության բացասական հետևանքներն իր վրա (անուղղակի զոհեր): Ֆիզիկական կամ սեռական բռնությանն ականատես լինելու կամ հոգեբանական հարկադրանքի անմիջական ազդեցությունը կրելու հետևանքով երեխան՝ տարիքային առանձնահատկություններից ելնելով, հայտնվում է խիստ խոցելի, հոգեբանորեն ծանր վիճակում: Սակայն, երեխան՝ որպես բռնությունից տուժած անձ, չի ստանում իրավական պաշտպանություն և, գործնականում, հաճախ մնում է բռնարարի անմիջական ազդեցության տակ: Նման պայմաններում, անհրաժեշտ է բռնության հարաբերություններին ականատես կամ բռնության ազդեցությունն այլ կերպ կրած երեխայի իրավական պաշտպանվածությունը հավասարեցնել անմիջականորեն բռնության ենթարկված անձանց կարգավիճակին՝ Օրենքով սահմանված նույն երաշխիքների տրամադրմամբ:

Անհետաձգելի միջամտության ժամկետը գործող կարգավորումներով չի կարող գերազանցել 20 օրը: Այս նորմը ոստիկանությանը թույլ է տալիս այս գործերով սահմանել ավելի նվազ ժամկետներ, օրինակ՝ հինգ կամ տասը օր, սակայն փորձը ցույց է տալիս, որ դա անարդյունավետ է: Եվ համեմատելով արդեն օրենքով նախատեսված պաշտպանական որոշում կիրառելու վերաբերյալ անձի դատարան հայցադիմում ներկայացնելու և դատարանի կողմից համապատասխան դատական ակտ կայացնելու ժամկետների հետ, գործնականում ընտանեկան բռնության ենթարկված անձը մնում է առանց պաշտպանության:

Օրենքով սահմանված չէ պարտադիր պահանջ գործերով իրավասու ծառայողների կողմից անհետաձգելի միջամտության որոշման պատճենը հանձնել ընտանեկան բռնության ենթարկված անձանց, ինչի բացակայության հետևանքով

մի շարք դեպքերում դատարանները մերժում են պաշտպանական որոշում կիրառել անհետաձգելի որոշման բացակայության պատճառաբանությամբ և նման իրավիճակում անձի դատարան դիմելու իրավունքը խախտվում է:

Օրենքով սահմանված չէ նաև պարտավորություն ոստիկանության աշխատակցի համար չլքելու բռնության տարածքը այնքան ժամանակ, քանի դեռ բռնության ենթարկված անձը չի հավաքել իրերը և չի տեղափոխվել ապաստարան, եթե այդպիսի որոշում կա:

Գործող կարգավորումների համաձայն պաշտպանական որոշումը կայացվում է մինչև 6 ամիս ժամկետով և կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ 2 անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով: Միջազգային փորձը սակայն ցույց է տալիս, որ բռնարարների մոտ բռնության կիրառման ամենաակտիվ փուլը պաշտպանական որոշման կայացմանը հաջորդող 18 ամիսներն են, ուստի հենց այդ ժամանակահատվածում է որ բռնության ենթարկված անձը կարիք ունի պաշտպանության: Բացի այդ, հիմնավորված չէ երկարաձգման դեպքերի սահմանափակումը: Պաշտպանության բոլոր միջոցներում առաջնահերթությունը պետք է դրվի զոհի և նրա երեխաների անվտանգության վրա: Օրինակ՝ ամուսնալուծության և երեխայի խնամակալության վերաբերյալ գործերով դատական վարույթը, որը զոհի համար ամենավտանգավոր ժամանակահատվածն է, կարող է տեւել տարիներ: Առկա երկարաժամկետ պաշտպանական որոշումները պետք է կիրառվեն մեկ տարուց ավելի ժամկետով՝ կայուն լուծումներ ապահովելու համար: Գործող կարգավորումներն առանց պաշտպանության են թողնում այն զոհերին, որոնց համար բռնության սպառնալիքը տևում է մեկ տարուց ավելի, ինչը օրենքի լուրջ բաց է:

Օրենքում հաշտեցման ընթացակարգի սահմանումը գործնականում խոչընդոտում է բռնության ենթարկված անձանց հասնելու արդյունավետ

իրավական պաշտպանության և խախտված իրավունքի վերականգնման: Հաշտեցման գործընթացը հակադրվում է ընտանեկան բռնության դեպքերի բարձր հանրային վտանգավորության, տուժողի բողոքից անկախ քրեորեն հետապնդելի լինելու և համաչափ, արդարացի ներգործության միջոցներ պահանջելու սահմանված ուղենիշերի հետ: Հարկ է նկատել, որ Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հաշտեցումն իրականացվում է անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության ընթացքում՝ ընտանիքում բռնություն գործադրած կամ բռնության ենթարկված անձի դիմումով՝ մյուս անձի գրավոր համաձայնությամբ: Միաժամանակ, նույն հոդվածի համաձայն՝ հաշտություն կնքելն անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների վերացման հիմք է: Ինչպես անհետաձգելի միջամտության, այնպես էլ պաշտպանական որոշման կայացման հիմքը ընտանիքում բռնության շարունակման կամ կրկնության վտանգի առկայությունն է և նման բռնությունը կանխելու անհրաժեշտությունը: Նման պարագայում առավել քան խնդրահարույց են գործող Օրենքի կարգավորումներն առ այն, որ անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության ընթացքում, երբ ոստիկանության ծառայողի կամ դատարանի որոշմամբ արձանագրվել է բռնության կրկնման ռիսկի առկայությունը, կարող է անցկացվել հաշտեցման ընթացակարգ: Այս առնչությամբ հարկ է նկատել, որ ՄԱԿ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 33 ընդհանուր հանձնարարականով կոմիտեն առաջարկում է Կոնվենցիայի անդամ պետություններին ապահովել, որ կանանց նկատմամբ բռնության, ներառյալ՝ ընտանեկան բռնության դեպքերը որևէ պարագայում ենթակա չլինեն վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերով լուծման: Կոմիտեն նշում է, որ թեև վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները կարող են ապահովել ավելի մեծ ճկունություն և նվազեցնել կանանց ծախսերը, դրանք նաև կարող են հանգեցնել կանանց իրավունքների հետագա խախտումների և բռնություն

գործադրած անձանց անպատժելիության: Այսպիսով, հարկ է նկատել, որ ընտանեկան բռնության պարագայում հաշտեցման գործընթացը կարող է հանգեցնել խիստ բացասական հետևանքների և նպաստել բռնության կրկնությանը:

Անհրաժեշտ է հստակեցնել Լիազոր մարմնի լիազորություններն ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում, քանի որ գործող կարգավորումների համաձայն լիազոր մարմնին վերապահված են այնպիսի գործառույթներ, որոնք գործնականում հնարավոր չէ իրականացնել ի սկզբանե իրեն վերապահված լիազորությունների, ինչպես նաև գործիքակազմի իմաստով: Մասնավորապես ըստ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 11-րդ կետերի լիազոր մարմինը համապատասխանաբար հաստատում է աջակցության կենտրոնի կողմից ընտանեկան բռնության ենթարկված և ընտանեկան բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցման կազմակերպման և իրականացման կարգը, հաստատում է ընտանեկան բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիոն ծրագիրը: Լիազոր մարմինը տվյալ պարագայում չունի գործիքակազմ անձանց հաշտեցնելու համար: Բացի այդ, ռեաբիլիտացիոն ծրագիրը ենթադրում է բազմակողմանի աշխատանք՝ միջգերատեսչական համագործակցության միջոցով, ուստի ծրագրի սահմանման լիազորությունը նպատակահարմար է, որ վերապահվի Կառավարությանը: Բացի այդ, անհրաժեշտություն է առաջացել վերանայելու օրենքով սահմանված ռեաբիլիտացիոն ծրագրի իրականացման պատասխանատուին, քանի որ դրա մշակման գործընթացից բացի ծրագրի իրականացումը ևս բազմակողմանի աշխատանք է պահանջում, ուստի ծրագրի տարբեր կոմպոնենտներ կարող են ունենալ տարբեր պատասխանատուներ, որոնց սահմանումը առավել նպատակահարմար է վերապահել Կառավարությանը:

Ինչ վերաբերում է առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմնի լիազորություններին ընտանեկան բռնության կանխարգելման բնագավառում, ապա գործող օրենքով սահմանվում է միայն առանձնային բժշկական օգնության տրամադրման դրույթը, ինչն ըստ էության որևէ լրացուցիչ երաշխիք չի սահմանում բռնության ենթարկված անձանց համար, քանի որ բոլոր քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետությունում առաջնային բուժօգնությունը տրամադրվում է անհատույց, ուստի անհրաժեշտ է ընդլայնել այս ոլորտի լիազոր մարմնի լիազորությունները և սահմանել, որ բռնության ենթարկված անձանց բժշկական օգնությունը տրամադրվում է անվճար:

**Քրեական Օրենսգրքի** մի շարք հոդվածներ պարունակում են ծանրացնող հիմք՝ հիմնված ռասսայական, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագման, կրոնական, քաղաքական կամ այլ հայացքների կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների վրա հիմնված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի դրդապատճառների վրա: Օրենսգիրքը չի ներառում սակայն սեռով պայմանավորված խտրականության ծանրացնող հիմքը: 2013 թվականի մայիսի 20-ին ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման» մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է՝ Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ուղղակի և անուղղակի գենդերային խտրականությունն արգելվում է: Նույն հոդվածը սահմանում է նաև գենդերային խտրականության ուղղակի և անուղղակի ձևերը, որը ներառում է ինչպես ընտանեկան դրության, հղիության և ընտանեկան պարտականությունների կատարման հիմքով խտրականությունը, այնպես էլ այնպիսի պայմանների հաստատումը, պահանջների ներկայացումը, որոնք առաջացրել են կամ կարող են առաջացնել բացասական հետևանքներ՝ որոշակի սեռի անձանց վնաս պատճառելու ձևով: Հարկ է նկատել, որ թեև վերը նշված օրենքով սահմանված է

գենդերային խտրականության արգելքը, բայց դրանից պաշտպանվելու կամ դրա հետևանքների վերացման համար սահմանված չեն պատասխանատվության միջոցներ: Այնինչ, ընտանեկան բռնությունը կարող է լինել և հաճախ դրդված է գենդերային կողմնակալությունից և գենդերային խտրականության ձև է:

Գործող կարգավորումներով պատժաչափերի քաղաքականությունը չի կարողանում պատշաճ կերպով անդրադառնալ գենդերահեն բռնությանը և համաչափ պատիժներ չի նախատեսում գենդերային կողմնակալությամբ կատարված հանցագործությունների համար:

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն ՀՀ կառավարության 7-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում (2022 թվականի հոկտեմբերի 31-ի ) մտահոգություն է հայտնել այն մասին, որ գենդերային հիմքով բռնության բոլոր ձևերը քրեականացված չեն: Կոմիտեն առաջարկում է քրեականացնել դա և հատուկ ուշադրություն դարձնել խոցելի խմբերի կանանց:

Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ քննչական կոմիտեն հանցագործությունների զոհերի վերաբերյալ ըստ սեռերի տարանջատված վիճակագրություն չի վարում, ինչը թույլ չի տալիս վերլուծելու իրավիճակը և մշակելու արդյունավետ քաղաքականություն: Սա նաև օրենսդրական բացի հետևանք է, որն էլ իր հերթին պատճառ է դառնում համապատասխան մեխանիզմների բացակայության:

Մերձավոր ազգականի կողմից կատարված արարքը ծանրացնող հանգամանք է սահմանված օրենսգրքի մի շարք հոդվածներում: Այնուամենայնիվ, վերը նշված ծանրացնող հիմքը դուրս է մնացել օրենսգրքի կարգավորումներից, մասնավորապես ինքնասպանության հակելուն, ինքնասպանության նպաստելուն, Մարդու թրաֆիքինգը կամ շահագործմանը, Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելուն, անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելուն առնչվող հոդվածներից:

Զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից կատարված արարքը ևս որպես ծանրացնող հիմք դուրս է մնացել Օրենսգրքի այնպիսի հոդվածներից, որոնք առնչվում են ընտանեկան բռնությանը: Մասնավորապես՝ Սպանությունը, Ինքնասպանության հասցնելը, Ինքնասպանության հակելը, Ինքնասպանությանը նպաստելը, Առողջությանը ծանր վնաս պատճառելը, Առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, Առողջությանը թեթև վնաս պատճառելը, Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը, Ազատությունից ապօրինի զրկելը, Հոգեկան ներգործությունը, Ֆիզիկական ներգործությունը, Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, Անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը, Շորթումը, Գույքային վնաս պատճառելը սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով հոդվածներից:

Քրեական օրենսգիրքը սահմանում է պատիժ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված պահանջն ընտանեկան բռնություն գործադրած անձի կողմից չկատարելու դեպքում: Ըստ էության սահմանված կարգավորմամբ պատիժը կարող է կիրառվել վերը նշված օրենքի հոդվածի 1-ից 4-րդ կետերի բոլորի առկայության դեպքում, ինչը անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումը չկատարելու պատժից խուսափելու հնարավորություն է տալիս բռնարարին այն դեպքում, երբ նա որոշման որևէ կետ է խախտել, բայց ոչ բոլոր կետերը միասին:

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքի առկա կարգավորումներով դատարանները մի շարք դեպքերում պաշտպանական որոշում կիրառելու համար ներկայացված հայցադիմումները վերադարձնում են կից փաստաթղթերի ցանկից պատասխանողի և ընտանեկան բռնության ենթարկված անձին միջև ընտանեկան և /կամ/ արյունակցական կապերի մասին տեղեկատվության բացակայության պատճառաբանությամբ: Սակայն որոշ

դեպքերում ամուսինները փաստացի ամուսնության մեջ են գտնվում կամ հանդիսանում են զուգընկերներ, ինչը նշանակում է, որ նման դեպքերում անհնար է ներկայացնել վերը նշված փաստաթղթերը: Բացի այդ, նույնիսկ համապատասխան կապը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում միշտ չէ, որ ընտանեկան բռնության ենթարված անձը կարող է դրանք ներկայացնել, մասնավորապես փախուստի դիմելու պատճառով: Ուստի անհրաժեշտ է նման փաստաթղթերի ներկայացնելու պահանջը ոչ պարտադիր սահմանել: Բացի այդ, արդեն իսկ օրենքով նախատեսված է, որ ընտանեկան բռնություն գործադրած անձը, որի նկատմամբ կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ինչպես նաև ընտանեկան բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունեցող չափահաս անձը ոստիկանության կողմից վերցվում են կանխարգելիչ հաշվառման: Ուստի հայցադիմումի մեջ պատասխանողի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու հանգամանքի վերաբերյալ տեղեկատվություն կամ այլ ապացույցը ներառելը նպատակահարմար չէ և ավելորդ ծանրաբեռնվածություն է ստեղծում բռնության ենթարկված քաղաքացու համար:

Ըստ գործող կարգավորումների, դատարանը պաշտպանական որոշման կիրառման մասին հայցադիմումը քննում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում առանց դատական նիստ հրավիրելու հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելու պահից՝ տասնօրյա ժամկետում, ինչը երկար ժամանակահատված է անձի առողջությունը և կյանքը պաշտպանելու համար: Այս ժամկետն անհրաժեշտ է կրճատել, ավելի արդյունավետ պաշտպանական միջոց ունենալու նպատակով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ Օրենսգրքի առկա կարգավորումներով սահմանված տուգանքը չի համապատասխանում իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած «համաչափության սկզբունքին», չի ապահովում արդարացի հավասարակշռություն սահմանվող

պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև: Սահմանված տուգանքի չափը չի համապատասխանում պատժի նպատակներին՝ չի վերականգնում սոցիալական արդարությունը, չի կանխում նմանատիպ արարքները և չի ներգործում հասարակության բարոյապես անկայուն անդամների վրա՝ ստիպելով պատասխանատվության սպառնալիքների ներքո չկատարել նմանատիպ պատժելի արարքներ: Արդյունքում, կիրառվող միջոցները խիստ անհամաչափ են արարքի ծանրության համեմատ և կրկնման ռիսկերը կանխարգելելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով և նման արարք կրկնելու ռիսկը գնահատելու համար անհրաժեշտ է փոփոխել և առավել խիստ ներգործության միջոց կիրառել:

**2. Առաջարկվող կարգավորման բնույթը**

Առաջարկվող իրավական ակտով նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում և կից օրենքների փաթեթում, մասնավորապես՝

1. լրացնել օրենքի վերնագիրը,
2. հստակեցնել առկա սահմանումները, դրանք համապատասխանեցնել ՀՀ Քրեական օրենսգրքի սահմանումներին, լրացնել նոր սահմանումներով,
3. վերանայել համատեղ բնակվող և համատեղ չբնակվող ընտանիքի անդամներին տարանջատելու կարգավորումը,
4. Օրենքով որպես բռնության ենթարկված անձ դիտարկել երեխային, ով անմիջականորեն ականատես է եղել բռնության կիրառմանը և/կամ կրել է այդ բռնության բացասական հետևանքներն իր վրա (անուղղակի զոհեր):

5. վերանայել անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշման ժամկետները,
6. ուժը կորցրած ճանաչել հաշտեցման ընթացակարգի վերաբերյալ սահմանումը,
7. հստակեցնել կանխարգելիչ հաշվառման շրջանակում ընտանեկան բռնության դեպքերի մոնիթորինգի պատասխանատուների շրջանակը և մեխանիզմները, հստակեցնել ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազոր մարմնի և մյուս դերակատարբերի լիազորությունները,
8. առաջնային բուժօգնության փոխարեն օրենքով սահմանել ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում՝ բռնության դեպքով պայմանավորված անձի առողջական խնդիրների լուծման նպատակով,
9. սահմանել բռնության ենթարկված անձանց համար նախատեսված ապաստարանների մատչելիության պահանջ հաշմանդամություն ունեցող անձանց համար,
10. վերանայել ՀՀ Քրեական Օրենսգրքի մի շարք հոդվածների ծանրացնող հիմքերը, մասնավորապես՝ ներառել սեռով պայմանավորված հիմքը, ինչպես նաև արարքը մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից կատարված լինելու փաստը,
11. հստակեցնել և դյուրինացնել ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պաշտպանական որոշմանն առնչվող հայցադիմումի ընթացակարգերը, քննության և ծանուցման ժամկետները և պայմանները,
12. սահմանել ավելի բարձր տուգանքներ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց

պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով սահմանված Անհետաձգելի միջամտության որոշումը կամ Պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելու դեպքում,

13. նոր կարգավորում նախատեսել ՀՀ քրեական օրենսգրքում՝ հետամտման համար:

**3. Ակնկալվող արդյունքը**

Օրենքի փաթեթի ընդունման արդյունքում իրավական հիմքեր կստեղծվեն իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների լուծման, ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի, ինչպես նաև բռնության ենթարկված անձանց պաշտպանության և աջակցության արդյունավետ միջոցների իրականացման համար: